

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 19

8 ՄԱՅԻՍ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոր գիրքեր (հմբագրական) Տ. Ա. — Երկու նամակ (ՕՐՄԱՆԵԱՆ Ս. ՊԱՏՐԻԱՐԲԵՆ ԵՒ ԳՈՒՐ-
ԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԵ) : — Դիտական Քրոնիկ. ՆՈՒՊԱՐ. — Աղջկան մի օրագիրեն փաղուած.
ՄԱՌԻ ՅՈ ԼԶԱՆՆԵՍԵԱՆ : — Անանուիւր. Ա. Ք. — Էրիկ կնիկ (Նորավեպ) ԽՈՍՐՈՎ. ՔԷՇԵՆ.
ԵԱՆ : — Նորերու բաժինը. «Իրիկուն». Օր. Ս. Պ. — «Ապրիլի ուխտը». Վ. ՀՈՒԿ : — Խմբագ-
րական նօթեր :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերքի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար Բառսուն դժ.
ԵՒ գաւառներուն համար յիսուն դժ., կանխիկ վճարելի : Արտասահման՝ 12 Ֆրանկ կամ
5 բուլլի : Թղթաստրական ծախքը հմբագրութեան վրայ է : Վեցամսեայ բաժանորդագրու
քիւն չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին : ՄԱՍԻՍ
հրապարակ կ'ելլի ամէն շաբաթ առտու : Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած
են, պէտք է իսկոյն իմացնեն հմբագրութեան : Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առար-
կութիւնները ճկատողութեան չեն առնուիր :

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր :

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասչելի պայ-
մաններով :

Ձեռն-Քէ կը ծԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐՍՅԻ

Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) غرضه سى اداره سى

ԽՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԴԷՍ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. կառավարութեան ֆոնդորին ներքեւ, երաշխաւորեալ զրամագլուխ ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատած է՝ միշտ գոյժգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբը եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ գաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուներէն զատ, Բարիզի՝ Օբէրա, Վոտվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Ֆօլի-Տրամաթիք եւ այլն թաղերները, Նաւի Պօռտոյի, Թուլուզի, Լիօնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թաղերները:

Պօն Մարշէն, Լուվրի վաճառատուները, Բիկմալիօնը, Բրէնթանի, Պէլ-Ժառաիէնի, Օթէլ ալ Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսաթլանթիք, Հաւր-Մարսիլիա նաւարկութեան, Ծովային Փոխադրութեանց, Փրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Ընկերութեան գրամատունն է Բրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է՝ մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել հրդեհի վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար. Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'Assurances Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հասցէ — Պօլիս. Մահմուտ փաշա, Պէօլիք Երլալ խան, թիւ 14, Լա Գօնֆիանս ապահովագր. ընկ. Գրասենեակը:

Գառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը եղող անքիֆալ վաճառատուն մը, Շուկայ Սահաֆլար, թիւ 46, ուր գաւառներէն առուծախի յանձնարարութիւններ կ'ընդունուին:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊՍՀՈՎՂԳՐԱԿԱՆ ԸՆԿ
ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ձ Ի Դ Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ա Յ Ձ Ի Դ Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն» ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՐԻՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵՂԻ ՁԷ ԳՏՆԵՆ, ԱՐԵԻՆԵԼԻՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ գիներով: Նպատաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի զերազանց՝ քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրութեան ՁԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ Երաշխաւորութիւններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒՐԻՆ ԵՒ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Բաքրէք Օղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Լիւայէթ Խան: — Դործակալութիւնք Թուրքիոյ զլխաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱՍԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵԴՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Մուգագէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Դիւանատան

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61

Զբոսանքան արաւոսման

Պալապեան ամէն օր ակոյալի ամէն տե-
ռակ հիւանդութիւններով տառապողներ,
կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Ներք-
շաբթի մինչեւ ժամը 5: Գիշերօթեան օր եւ է
ժամուն կարելի է դիմել: Պալապեան կ'ե-
րաշխաւորէ իր լեցուցած ու չինած ակոյա-
նները: Ծորեկները ակոյալ քաշել տալու հա-
մար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին
կ'աճէն կախեալ է:

Աղփասներուն ձրի

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՁԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տե-
սակ գոհարեղէններ ունե-
նալ, աժան ու ճաշակա-
ւոր, թէ՛ արեւելեան եւ
թէ՛ եւրոպական ճաշակով
պատրաստուած, ժամա-
ցոյցներ, արծաթեայ գա-
ւաղաններ եւայլն, դիմե-
ցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շու-
կան, Մեծ-փողոց, թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին հաճար
100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ գնո-
ղին հաճար հարիւրին 5 զեղչ: Դործածուած
գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին
10 զեղչով եւ կ'առնուին. իսկ ապառիկ զե-
նողներէն՝ 100ին 15 զեղչով:

Ընդհանուր վիշտեր կան որոնք այս աշխարհածանօթ ղեղով կատարելապես կը բժշկուին:



Հիշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

SCOTT'S EMULSION

Հազ, հարբուխ, և բոլոր որկորի և թորի վիշտեր ինչպէս թորացաւ, և պրօնչիտ, շնչառութեան և կուրծքի երակներուն փորփոգումը և միւս տկարութիւնն պատճառող անհաստութիւններ՝ անմիջապէս կը զտուին, և կը տկարացուն և վերջապէս կը բժշկուին: Կամ անաւնդ ծիւրական ակտի նկատմամբ՝ առաջին նշանն, տեսնուած ատեն, անմիջապէս առաջը կ'առնէ: Եւ ընտանիքի մը մէջ այսպիսի աղետ մը կայ, պէտք ղեղարան մը ղիմել և:

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

մը առնել: Բարձրի Բաղադրութիւնը այս աղետը դարբնէ և տան մէջ ուրախութիւնը կը վերականգնէ:

Բոլոր բեղաժողովները և բեղաժողովները կը ծախեն:

ԳՈՐԾԱՐԱՆ

Գործի մաքրութեան եւ նորոգութեան

(Գրասենեակ՝ Մահմուտ-փաշա, Թարագճը-լար, Մահմար Սանի կից. Թ. 37)

Այս հանրածանօթ գործարանին մէջ կը մաքրուին աղտոտած եւ փոշոտ թէ՛ մետաքսէ եւ թէ՛ բարդէ ամէն տեսակ ընտիր գորգեր, քիմիական դեղորէից միջոցաւ, առանց որ եւ է արատ կամ հետք ձգելու: Ընդհակառակը, բոլորովին նոր երեւոյթ մը կ'առնեն այս գործարանին մէջ մաքրուած գորգերը:

Ունի նաեւ առաւելութիւն մը նոր գորգերու վրայ, այն է թէ՛ այս գործարանին մէջ մաքրուած գորգերը զերծ կը մնան ցեցերու (կիւվէ) կեր ըլլալէ:

Կը նորոգուին նաեւ օրեւէ կերպով յիշատակած գորգեր:

Սոյն գործարանը կը ստանձնէ նաեւ պատրաստել նոր գորգեր, ինչ մեծութեամբ ու ճաշակով որ ուզուի:

Յանձնարարութիւնը պէտք է ուղղուին գրասենեակը:

Իւրաքանչիւր պայմաններ:

ՏՈՔԹ. ՔԻՐԻԱԲՈՒ

Dr. Kiriakou Bander mali

Ջիզերու, լեարդի եւ սսամոսի հիւանդութեանց մասնագէտ

Բարիցի հիւանդանոցներուն մէջ գործելէ կան փորձեր կատարելով վերագրեալ հիւանդութեանց համար մասնագիտութիւն ձեռք բերած է: Իրեն դիմողները կը դարձան ամէն օր ժամ 7էն 10 Բերա Ս. Վա Համամ հեղինական հիւանդասարանին դէմ, թիւ 5 տունը, իսկ առատունները մինչեւ կէսօր: Պոլիս կամուրջին գլուխը Բասթաքի Արսէնաքի թիւ 71 դեղարանը: Քիչ ատենի մէջ կը դարձան ջրային տկարութիւններ, լուսնոտութիւն, առաւելութիւն, գլխու ցաւ, սրտի բաթաւում, անքունութիւն, սիրտի տեսիլ, յոգացաւ, ստամոքսի հիւանդութիւններ, դժուարութիւններ, ախտաբան հիւանդութիւն եւ այլն: Դարմանման համար ներարկումով ելեկտրականութիւն կը գործածէ: Ելեկտրական դարմանի համար մասնաւոր սրահ մը կայ:

ՄԱՍԻՆ

54^{րդ} ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ՔԻԻ 19

8 ՄԱՅԻՍ 1904

ՆՈՐ ԳԻՐՔԵՐ



Ատեն մը կը գանգատէինք, —կամ թէ գանգատողներ կային, —թէ վիպասանութենէ ուրիշ գիրք հրատարակելու հետամտութիւն չիկայ մեր մէջ: Թերեւս, այսօրուան ընթացքով, շատ չանցած գանգատինք թէ քարոզագիրքերը գրաւած են հրատարակչական հրապարակը և թէ վիպասանական աղուոր հատորի մը կարօտը կը քաշենք:

Բսելու այս ձեւին հակառակ, հակադրութեան մը մէջ գտնուելէ հեռու ենք բարեբաղդաբար, վասն զի՝ իրականին մէջ՝ վէպն ալ, կրօնային գիրքն ալ, կամ գիտականն ու բանաստեղծականը իրարու կը յաջորդեն առնականալօրէն, և սպասելով միշտ Դր. Զօհրապի նորամուտի հատորներուն, Կեանքի դրուագներ, և Մ. Աճեմեանի բանաստեղծութեանց հատորիկին՝ Վերջին կայծեր, արդէն իսկ հրատարակուած կը գտնենք, միակ շարքութեան մը մէջ, Տօքթ. Յովս. Տէր—Ստեփանեանի Կես-բժեկական խօսակցութիւնները և Բարգէն Վարդապետի Քարոզները: Առաջինը՝ արտասովոր մը Արեւելի ու Մասիսի մէջ երեւցած առողջապահիկ causeries-ներուն և երկրորդը ամփոփոյքը եկեղեցւոյ բեմէն խօսուած քարոզներու:

Օրուան հեղինակները բժիշկ մը ու վարդապետ մըն են ուրեմն, ինչ որ անգամ մըն ալ կը հաստատէ թէ հրատարակչական գործը միօրինակութեան չըջանի մը մէջ չէ: Վաղուան գիրքն ալ կրնայ Մասամ Պօլառիին թարգմանութիւնն ըլլալ, որուն ձեռագիրը պատրաստ ունի արդէն գրասէր երիտասարդ մը, կամ փիլիսոփայական հատոր մը: Տեսակներու, ճաշակներու այս պէսպիսութիւնը որ մեր լրագրութեան մէջ ալ կը ցուցադ-

րուի, —և որուն ջերմ հետեւող մը եղած է Մասիս՝ 1900էն ի վեր, հակառակ մասնագիտական թերթի խնդրանքին, —ամէնէն գեղեցիկ երեւոյթն է որ երեւան կուգայ հրատարակչական գործին մէջ: Իրաւ է թէ Քարոզները քիչ մը սկսան ծանր կշռել նշարին մէկ կողմը, Տօքթ. Ուռլալըրնի ու Սասկան վարդապետի Քարոզները կանխելով Բարգէն վարդապետինները, մինչ Թավչան-ճեան — Մրցանակին արժանացողները մամուլի ներքեւ ըլլալու են այս միջոցիս: «Գրուած քարոզ»ը իր տեղը ունենալու էր, ուշ կամ կանուխ, մեր մամուլին մէջ, և 1903 — 1904 տարիներուն վիճակեցաւ արժանաւոր տեղը տալ անոնց:

Այս չորս հատորներուն գտնելիք ընդունելութիւնն ու սպառումը պիտի ցոյց տան թէ հանրութեան ընթերցասէր մասը նոյն հակումը ու հետաքրքրութիւնը ունի՝ քարոզ կարդալու՝ ինչ որ ունին բարեպաշտները քարոզի ունկնդրելու: Թէև, քարոզ բառը ինքնին շատ ցամաք, շատ անհրապոյր է յատկանշելու համար այն կրօնային — գրական ու տեղ տեղ ալ ընկերային, ընտանեկան, բանաստեղծական գրուածքները որոնք կընծայուին քարոզ անունին տակ: Նուազ ցամաք ու անհրապոյր չպիտի երեւնար «Կէս-բժեկական» վերնագիրն ալ, եթէ արդէն իսկ ծանօթ չըլլար իր ներքեւ ամփոփած օգտակար ու շահեկան նիւթերովը:

Քիչ անգամ կը զուգադիպի որ, մարմնի բժշկութեան ու հոգիի բժշկութեան ձգտող երկու գիրքեր միեւնոյն ատեն լոյս տեսնեն, ինչպէս այս անգամ Տօքթ. Տէր—Ստեփանեանի ու Բարգէն վարդապետի հատորնե-

րովը: Արագ ակնարկ մը նետելով անոնց վրայ, — քանի որ այս էջը չէ՛ Գրախօսականին տեղը ու քննադատականներ պիտի երեւան անուշտ՝ այս նոր հրատարակութեանց շուրջը, — Կես-բժեկական խօսակցութիւնները ամփոփուած կը գտնենք պարզ, սիրուն, կոկիկ հատորի մը մէջ, հարիւրէն քիչ մը աւելի էջերով ու քսանէն պակաս զլուխներով: Աւօրեայ կեանքի հետ վերաբերութիւն ունեցող նիւթեր, ամէնքն ալ, որոնց ամէն մէկէն բան մը կը սորվի ընթերցողը, ու հաւասարապէս կ'օգտուի ցամաքի թէ ծովու վրայ, նստուկ կամ շարժուն վիճակի մէջ, ամառն ու ձմեռը: Մանչեռալ քնամիտին հեղինակը, այս անգամ, միակ խափ մը դէմ զգուշացնելու համար չէ՛ որ կը շարժէ իր գրիչը, այլ ասուլիսի մը անձանձրոյթ ձեւին տակ՝ ընդհանուր թեւադրութիւններ կ'ընէ հիւանդութեան պարագաներու վրայ: Հաճոյքով կարդացուելիք այս գիրքը պէտք է որ ամէն ընտանեկան յարկի տակ, ամէն անհատի քով գտնուի, ու կարդացուի:

Միւսը, Քաղաքները, բառին բուն առմամբը լուրջ և ստուար հատոր մըն է, չորս հարիւրի մօտ էջերով, որ կը բովանդակէ երեսունը-եօթը քարոզ, մեծագոյն մասը զուտ կրօնային և քանի մը հատն ալ դամբանականներ, յուզիչ տողերով: Համբերատար ու խնամատաշխատութեամբ զլուխ ելած գործ մըն է որուն ձևատը կը զարդարեն Ս. Պատրիարք Հօր և Դուրեան Սրբազանի կողմէ հեղինակին ուղղուած երկու նամակներ որոնք մասնաւոր հրապոյր մը կուտան անոր:

Արտատպելով գրագէտ Պատրիարքին և Դպրեմանքի գրագէտ Վերատեսուչին այդ երկու գրուածքները, — աւելորդ է ըսել գեղեցիկ ու ինքնատիպ, — կը կարծենք հաճոյք մը պատճառել մեր գրասէր ընթերցողներուն, որոնք անոնց մէջ պարզուած պիտի տեսնեն ձեռնհաս ու առողջ տեսութիւն մը՝ քարոզներու մասին ընդհանրապէս, ու պատուաբեր գնահատական մը՝ Բաբգէն վարդապետի այս երկասիրութեանը նկատմամբ մասնաւորապէս:

Տ. Ա.

ՎԱՐԴԱՊԵՏՆ ԱՇԱԿԵՐՏԻՆ

Սիրելոյ Որդեկիդ

Տ. Բաբգէնի Ս. Վարդապետի Կիւլիսեռեան Ի Տեղ խնդայ

Աչքէ անցուցի ՔԱՐՈՉՆԵՐ հրատարակութեանդ տպագրեալ թերթերը որչափ կըրնայի, ամբողջական եւ ուշադիր ընթերցման համար՝ պաշտօնական զբաղմանաց արգելքը Բեզի ալ ծանօթ պէտք է ըլլայ: Վստահ եմ թէ ամէն բայցատրութիւններդ համաձայն են այն ուղիւ վարդապետութեան՝ յորում սնար ու վարժեցար, և զոր՝ աստիճանիդ և պաշտօնիդ համաձայն կը խօսիս ու կը քարոզես արդէն:

Ինչ որ այդ առթիւ կը փափաքիմ յայտարարել՝ այն խնդութիւնն ու խնդակցութիւնն է, զոր կըղգամ տեսնելով թէ մեր վարդապետական կոչման համաձայն եղող գրական աշխատանքը, որ է կրօնական և բարոյական նիւթերու մշակութիւնը, անձան ձամպուն մէջ կը յառաջանայ. գրողներու կողմէ առաւել՝ փութաջանութիւն, կարդացողներու կողմէ առաւել՝ ընդունելութիւն:

Մտաց զարգացման համար ամէն աշխատանք՝ գնահատելի է և դովելի. զայդ գիտէ ամէն մարդ. գիտեմք և մեք. բայց սրտի զարգացման համար եղած աշխատանքը՝ ես չպիտի վարանիմ նախադասել, գիտնալով թէ ամէն աղէկութեանց աղբիւրը և ամէն լաութեանց հիմը՝ ուղղութիւն և արդարութիւն, բարութիւն և առաքինութիւնն է:

Մեր կոչումը՝ այդ գերագոյն նպատակին պաշտօնէութիւնն է. Բանայութեան նուիրական ձեռնադրութիւնը և Վարդապետութեան եկեղեցական տուչութիւնը կը պարտաւորեն զմեզ՝ ժողովրդեան բարոյականը մեր ամենօրեայ ջանից և աշխատութեանց առարկայ ընել, ինչպէս ամէն արհեստաւոր իւր ճարտարութեան նիւթը և ամէն պաշտօնակալ իւր պարտաւորութեան դործը:

Ուրախ եմ արդիւնքին համար, ուրախակից եմ արդիւնաւորներուն հետ, երախտապարտ եմ բարեարդողներուն հանդէպ, երբ կը տեսնեմ որ Բանին կենաց քարոզութիւնը խօսքէն գիրի և բեմէն գիրքի սահ-

մանը կ'անցնի և տեւական և տարածական կերպարան կ'ըզգենու :

Փափաքած էի ես ինքս ալ այդ նպատակին համար աշխատող մը եղած լինել, բայց այդ հանգարտ աշխատութեանց համար ատեն ու միջոց չունեցայ : Միտիթարուած կ'ըզգամ զիս՝ երբ ուրիշներու կողմէ նոյն նպատակին իրականացումը կը տեսնեմ, և լիաբերան կ'օրհնեմ զոր' զն ալ, կարդացո' զն ալ, ինծի համար բաւական սեպելով քաջալերողի համեստ դերը :

Ողջ լինել Բեզ մաղթեմ

Պատրիարք Կոստանդնուպոլսոյ

ՄԱՐԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

10 Մարտ 1904

Պատրիարքարան Հայոց

Կոստանդնուպոլիս

ՆՍՄԱԿ-ՅՍՈՒՍՅԱՐԱՆ

Սիրելի Վարդապետ

ԲԱՐՈՋՆԵՐՈՒԹ տղամարական թերթերն հետզհետէ ընդունելով՝ մտադրութեամբ կարգացի, և անկեղծօրէն կը խնդակցիմ որ հրատարակութեան տալով զանոնք՝ մեր աղքատիկ գրականութեան վրայ կ'աւելցնես նոր ու կարեւոր նպաստ մ'ալ, լուրջ ընթերցողներու նուիրելով առողջ խորհրդածութիւններու և հոգեխորդ հայեցողութիւններու գեղեցիկ փունջ մը :

Իրա՛ւ է որ խօսուած քարոզները միշտ բան մը կը տուածն իրենց հմայքէն՝ երբ ունկնդիրներու շրջանակէն դուրս հանուելով ընթերցողներու առջև կը դրուին, թէ՛ խօսուելէ վերջ գրի առնուած ըլլան անոնք՝ ինչպէս կ'ընէր Ոսկեբերան, թէ՛ ծայրէ ի ծայր սերտուած ըլլան՝ ի'նչպէս կ'ընէր Օգոստինոս : Վասն զի ունկնդիրներն են աւելի՛ որ թարմ անուշութիւնը կը զգան բեմական ճարտարխօսութեան այդ ծաղիկներուն՝ որ սրբավայրի խորհրդաւոր շուքին տակ գիտեն ամիս, և ուր իրենց բուրումը կը սաստկանայ ու կը ծաւալի՝ խօսողին համոզկեր շունչին՝ չեւալն ու շարժումներն շնորհիւ . սակայն քաղցր է ինձ յուսալ թէ ընթերցողներդ ալ՝ որոնք խօսքի արտայայտիչ ոգեւորումին հաղորդ

ըլլալու տրամադրութիւնը չեն կրնար ունենալ՝ պիտի գնահատեն զանոնք ըստ արժանւոյն :

Աստուծոյ խօսքը ա'յնպէս պէտք է խօսիլ, որ բեմին վրայ ու մամուլին տակ հասարակապէս կարենայ ներգործել սիրտերու, և այս հանգամանքը՝ միակ ուղղութիւնն է լաւագոյն քարոզութեան :

Չենք ուզեր խօսիլ անոնց մասին՝ որ ո'չ քարոզի մը ունկնդրելէ հաճոյք կ'ըզգան և ո'չ ալ զայն կարդալու զոհողութիւնը . յանձն կ'առնուն, ու երկու պարագային մէջ ալ՝ ինքզինքնին կը կարծեն գտնել ձանձրալի խրատականներու կամ հաստատատիպ կրօնաբանութիւններու հանդէպ, որոնց համանիշն ըլլալու դժբախտութեան հանդիպած է արդէն քաղաք Մոլիէրէն առաջ, ու վերջն ալ թերեւս աստիճան մ'աւելի : Այսօր՝ նոյն իսկ գրական տեսակէտով՝ ձախող ներկայացում մը կրնայ նկատուիլ ԲԱՐՈՋՆԵՐՈՒԹ պարզ անունը գրքի մը համար՝ թէ իսկ բարոյական — ընկերային կամ կրօնական — իմաստասիրական ճշմարտութիւններու լաւագոյն բացատրութիւնը բովանդակէ իր մէջ, ու ամէնէն աւելի լպիրշ ու անձոռնի նորաւէտի մը չափ հաճոյական ընթերցում մը ընձեռելու երաշխաւորութենէն զուրկ կը մնայ դժբախտաբար :

Բայց ի՞նչու ծանրանալ միայն ժողովուրդին տկար կողմերուն վրայ : Մենք՝ պաշտօնեաներս եկեղեցւոյ՝ ցո՛րչափ քարոզելու արուեստին հետ չլծորդենք գործելու առաքինութիւնը, այդ յայտնի թերութիւնը տաղտկալի բարոյախօսներու կարգը պիտի դասէ զմեզ . ու բանիմացներու մէջէն շատեր ալ Մալհէրալի հետ պիտի պատասխանեն, իբր թէ քունը գլուխնին Ռէմիի Սրքեպիս կոսովսին քարոզին ունկնդրելու հրաւիրուէին . «Ներեցէ՛ք ինծի, առանց ատոր ալ պիտի կրնամ քնանալ» :

Մեր անկարողութեան ու պաշտօնի անգիտակցութեան հետեւանքովն է անշուշտ, որ փեթուր կը խոստանանք ժողովուրդին և յետոյ ամուլս կը ցուցադրենք անոր, Միջին Դարում ապրող այն քարոզչին նման՝ որ Դարբիէլ Հրեշտակապետին ներքոյն ընկու

առիթով՝ մասունքներու տուփին մէջ փետուր մը պահած էր ու կ'ուզէր իր միամիտ ունկնդիրներուն վրայ յանկարծական ազդեցութիւն մը ի գործ դնել, կարծեցնելով անոնց թէ Հրեշտակապետին թեւէն ինկած է ան: Ինք չէր գիտեր, նոյն ատեն թէ իր այդ խաղը փոխանակուած էր ուրիշի մը սարքած կատակովը, որ վեցուրից անդ ամուխ դրած էր մասնատուփին մէջ: Այսպէս քարոզիչը չգտաւ ինչ որ պահած էր հոն, սակայն առանց կորսնցնելու իր պաղարիւնութիւնը գոչեց. «Հրաշք, սիրելիներս, ես կը յուսայի Հրեշտակապետին փեցուրդ ցոյց տալ ձեզի, բայց նախախնամութիւնը ամուխ ու մոխիր դրեր է անոր տեղ, վասն զի վաղը Սուրբ Լաւրենտիոսի տօնն է, և տարակոյս չունիմ որ անոր նահատակութեան գործիքը եղող կասկարային տակէն բերուած պիտի ըլլան ատոնք»:

Երբ բեմի վրայ փետուրի սլացքն ունեցող մեր խօսքերը եկեղեցական կեանքի իրականութեան մէջ ամուխի ու մոխրի ցրտութեան տակ կ'անշարժանան, վաղը՝ ո՛չ թէ Լաւրենտիոսի, այլ Սպանդարամեան տօները կը սկսին, ու մարգարէներու պարը դադրած՝ հերատուկներու կաքաւը կը թնդայ:

Ինչ որ ալ ըլլայ սակայն, երբ Աստուծոյ խօսքը չթարգմանուիր, երբ բեմը կը խըրթանայ իր բանաւոր զարդարանքէն, մարդային սպաւորութիւնը կը կրէ միշտ՝ որը հեթանոսական հին կրօնքի տրտում նախաձեռնողներուն խորհիլ կուտար, «Ի՞նչու արդեօք դադրած են պատգամները». և յայտնի է թէ ինչ աղետաւոր վախճանի մը նախագուշակը եղաւ այդ լուութիւնը:

Աւետարանի պատգամաւորութիւնն է եկեղեցականին գործունէութեան կարեւորագոյն կողմը, ու անով կրօնքը կրնայ մարդկայնացնալ քրիստոնէական բեմին վրայ և քրիստոնէայ հոգիներուն խորը: Հասարակաց պաշտամունքին մէջ երգի դաշնակութիւններով յափշտակուած հոգին կրնայ թեւակոխել աստուածային բարձունքներու և երջանիկ խոյանքի մը սաւառնումովը խայտալ, երբեմն ալ աղօթքի մրմունջներու մէջ ունայնացած՝ անսահման խորքերու մխրձումովը

ընկղմիլ անո՛ւն անէացումի մը ալքերուն տակ: Բայց այդ «հոգեով օրհնութիւն»ը, այդ «լեզուաւ աղօթք»ը նուազ կ'արժեն «վասն շինածոյ եկեղեցոյն», Առաքեալին բացատրութեանը համեմատ: Գարողելու կամ մարգարէականութեան գիտակցութիւնն է և ո՛չ թէ լեզուախօսելու գերզգայութիւնը, որ պիտի կրնայ մարդկային բնել կրօնքը, առանց ծայրատելու հոգիին հիւ վերելքները կամ ու՛ր վայրաբերումները:

Երբ Աստուծոյ խօսքը չներգործեր եկեղեցոյն մէջ՝ պաշտամունքը իր իմաստի լրութենէն կը լրիպի. երգերն ու աղօթքները չեն միայն՝ որ կը շինեն եկեղեցին, ո՛չ ալ խորհուրդներն՝ իրենց մեծվայելչութեամբ. «Ի մէջ եկեղեցոյ կամիմ բանս հինգ մօտ խօսել, զի և զայս խրատիցեմ, քան զբաղում բանս՝ լեզուաւ» (Ա. Կրնթ. ԺԴ. 19):

Ինծի այնպէս կը թուի որ երբ մեր եկեղեցոյն բեմը պահանջուած խնամքն ու մը տալուութիւնը վայելէ ու շաղակրատելու անպատեհութիւնները վախճանին անկից, քրիստոնէական ոգին պիտի կրնայ թափանցել առնասարակ թէ՛ հոգեւորականին և թէ՛ հաւատացեալներուն մէջ. և դժուարին պիտի չըլլայ հասկնալ թէ կրօնի բարձրագոյն ճշմարտութիւններուն անկ է բարոյական մագնիսացումը ըլլալ մարդկային բովանդակ գործունէութեան:

Պէտք է ըսել թէ վերջին տարիներու մէջ հրատարակուած քարոզներու մէկէ աւելի հատորիկները և կրօնական գրուածներ գոնէ կրցան ներշնչել ժողովուրդին սա՛ համոզումը թէ հոգեւոր փրկութեան գործին համար պակաս չեն այնպիսիներ, որոնք Աստուծոյ խօսքը կը սիրեն լրջօրէն օգտակար ընել շատեւրու և անկեղծ համակրութեամբ մ'է որ մօղովուրդը կ'ողջունէ զանոնք:

Բու ՔԱՐՈՉՆԵՐԳ ալ, Սիրելի վարդապետ, որոնք լա՛ւ մտածուած և լա՛ւ արտայայտուած ըլլալու առաւելութիւնը ունին, կը մաղթեմ որ կրօնապէս հիւանդ կուրծքերու վրայ ծանրացող ձանձրոյթի մղձաւանջը փարատելով հանդերձ՝ առողջ հաւատքի մը դալարութեամբ զուարճացնեն բարի հոգիները:

Ողջունել սիրոյ

ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՐԵԱՆ

25 Փետր. 1904

Ի Դպրեմկանս Արմաշու

ԱՂԶԿԱՆ ՄԵ ՕՐՈՒԳԻՐԵՆ ՔԱՂՈՒԱԾ

ՆԵԿՈՒՇԱՔՔԻ

Քանի մը չաքաթներ առաջ ֆրանսական ակադեմիին մէջ լըկուվէի յաջորդը ընդունուեցաւ, Ռընէ Պազէնը:

Ժողովրդական վիպասան մըն է անիկա, որ, ինչպէս գիտես, իր ծննդավայրէն գրեթէ դուրս չելլելով, կրցած է այնքան համբաւ վաստակիլ: Այս գրագէտը միշտ ժողովուրդին համար աշխատած, տքնած, գրած է, և ապիկա՝ է՝ ահա բո՛ւն պատճառը իր յաջողութեան:

Սրտայոյզ երկրաբաղձութիւնով մը, ընտանեկութիւնով մը, գութի, մանկունակ պաշտօններու արտայայտութեամբ կը թըրթռայ ամբողջ իր գործը: Լացնելու աստիճան տխուր պատմութիւններ գրած է երբեմն, և թէև միջակ վիպասան մը կը սեպուի ինք, բայց իր այս փափուկ, ֆրանսական ոգին ուսումնասիրող յատկութիւններով կրցաւ վերջապէս «անմահ» մը ըլլալ, բան մը՝ որ պզտիկ երջանկութիւն մը չէ գաղղիացի գրագէտին համար:

«Համակրութիւնը, կ'ըսէ՝ ըննադատ մը, Ռընէ Պազէնին վրայ խօսելով, իր վէպերուն շուրջը կը ճառադայթէ, ճիշդ ինչպէս բոյրը՝ ծաղիկին, լոյսը՝ բոցին և ջերմն ալ՝ վառարանին բոլորաիքը»:

Ռընէ Պազէնի ընտրութիւնը ֆրանսական Ակադեմիին մէջ, իրապաշտ գրագէտներուն ջիղերուն կը դպչի՝ սարսափելի կերպով: Զօլա, որ իրապաշտութեան հայրը կը կոչուի, չկարենա՞ր անմահներուն աթոռը բազմիլ, և իրմէ անհամեմատ կերպով տկա՞ր միջակ հեղինակներ յաջողին... իրաւ որ, ի՛նչ մեղքս պահեմ, իմ ջիղերուս ալ կը դպչի: Բայց անհամբերութեամբ կըսպասեմ թէ ի՛նչ պիտի գրեն այս մասին Ֆլոպէրի, Զօլայի, Կոն-ժուաններուն աշակերտները:

ՆԵԿՈՒՇԱՔՔԻ

Նւ որովհետև քիչ մը ուշ կը տեսնենք զիրար, կ'ըսես որ շատ կը ձանձրանաս, թէ սիրտդ չա՞տ կը նեղանայ: Ա՛հ, բայց ես քո

անձի՛դ բացակայութիւնը կըզգամ ամէն ատեն: Քու սիրտդ կը նեղանայ որովհետև մինակ ես, բայց ես կը տուայտիմ որովհետև դուն քովս չես:

Մի՛ ստեր, խոստովանէ՛ որ ես քեզի աւելի՛ կը սիրեմ, պաշտելի՛ բարեկամուհիս: Զօրեգաբքի

Նրբ մեր գրագէտներն ու գրագիտուհիները կը դանդատին թէ գրականութիւնը, բանաստեղծութիւնը չհարստացնեն զիրենք պէտք եղածին պէս, անդին, ուրիշ տեղեր, Ամերիկայի մէջ օրինակի համար, հեղինակներ կան, որոնք ոտանաւոր մը գրելով կատարեալ հարուստներ կը դառնան, իբր թէ օրին մէկը վիճակահանութեան մը մեծ պարգեւը շահած ըլլային:

Քիրլինկ՝ պարզ, միամիտ, նոյնիսկ դասական քերթուած մը ունի, The absent-minded Beggar, որուն ամէն մէկ բառը, իրեն քսանընթինդական ֆրանգ վաստկցուցած է: Կատակ չէ ըսածս: Անոր շահէն այնքան մարդիկ օգտուած են, հարաւային Ափրիկէի մէջ մեռնող զինուորներուն այրիներէն և որբերէն սկսեալ մինչեւ Միացեալ Նահանգաց ամէնէն աղքատ, չքաւոր ընտանիքներուն անդամները:

Նրբ Kimը հրատարակեց, առաջին տպագրութենէն հինգ վեց հազար անգլիական ոսկի շահեցաւ, ձեռագիրի Կոնէրէն դատ, որ հարիւր հազար ֆրանք է եղեր, կը պատմեն:

Նըջանիկ բանաստեղծ:

ՀԻՃԵԱՔՔԻ

Նրէկ իրիկուն, Լեոնին աղաչած էի որպէսզի Միլպօի Le Galvaireը ղրկէ ինծի: Այս առտու ստացայ: Քիչ մը թղթատեցի, յետոյ՝ մէկ կողմ նետեցի, ճաշէն վերջը վերըսկսելու համար:

Առաջին անգամ երբ ձեռքս առի զայն, ընթերցումս կանոնաւորապէս շարունակելու համար, յանկարծ թուղթի կտոր մը ինկաւ անոր էջերուն մէջէն և կանապի հետաքրքրութեամբ մը վեր առի գետնէն ու սկսայ կարդալ:

Լեոնին գիրն էր. անվերնագիր, դեռ չվերջաւորուած, անխնամ կերպով թուղթի

վրայ առնուած, երբեմն անընթեռնելի հա-
ուած մըն էր, զոր պիտի փորձեմ քեզի ալ
գրելու եթէ յաջողիմ, եթէ կարենամ մէջէն
ելլել:

«..... Ձեռն գիտեր, չեռն գիտեր թէ քու
նայուածքէդ աշխարհիս ամէնէն հրաշալի,
փողփողուն, լուսաւոր արեւալնը կը շինուի,
ու քու շունչէդ տիեզերքի ամէնէն նոր,
զգլխիչ, խելայեղին բուրումը:

«..... Ձեռն լսած և կամ չեռն երեւակայե-
ր թէ բառերէդ, խօսքերէդ, ոիրային բանաս-
տեղծութիւններուն, քերթուածներուն, գե-
ղօններուն ամէնէն հիւսնալին, անստղիւտը,
իրականը կը յօրինուի, թէ քու մարմինիդ
ձեւերը և շարժումները՝ արուեստագէտին
աղուոր դիրքեր ներշնչել պիտի տային:

«..... Կարելի չէ որ հաւատան կամ
(անընթեռնելի) թէ քու ձայնիդ ելեւէջներէն
երդանան մը իր ամէնէն աւելի անուշ, հաւ-
նուած, անըջային երաժշտութեան թրթռում-
ները, խաղերը պիտի դողնար, և թէ քու
կուսական մաքուր, արփաւէտ անուրջներուդ
շարունակական տեսիլքներովը մարդ կրնայ
երջանկութիւնը վայելած ըլլալու հաճոյքը
ունենալ:

«..... Է՛հ, երջանիկը ե՛ս եմ: Աշխարհիս
ամէնէն փալուռն արեւալնը իմ քովս կը
գտնուի, տիեզերքի ամէնէն ըղձալի, գերա-
զանցապէս նոր բուրումովը կ'օրորուիմ: Բա-
նաստեղծութիւններուն, վէպերուն ամէնէն
աննիւթականը, հրայրքոտը, երկնայինը կը
կարդամ, և արուեստագէտներուն յօրինած
ամէնէն խօսուն, կենդանի, պաշտելի մար-
մինը աչքերէս հեռուն չէ այնքան: Երաժշ-
տութիւն: Բայց ո՛չ ոք լսած է ասանկ կտոր
մը, իր կեանքին մէջ: Ու անուրջներուն ա-
մէնէն գրգռիչովը, մոգականովը.... (անըն-
թեռնելի)»:

Թերեւս պիտի շարունակուի տակաւին,
որովհետեւ ո՛չ վերջակէտ կայ, ո՛չ ալ վեր-
ջաբան:

Ո՞վ է արդեօք այս իտէական արարածը,
ո՞ր կը գտնուի, ո՞ր երկինքին տակ կ'ապրի:

Սարսափելի նախանձ մը, անհուն, կրծող,
չարչարող նախանձ մը բռնկեցաւ ներսս:

Թուղթը Լեոնին չպիտի վերադարձնեմ,
եթէ փնտռէ, «չե՛մ գիտեր» պիտի ըսեմ:

Միւսկոյն կարդալու մարմաջս փախաւ
հիմակուհիմա: Վա՛ղը տեսնենք:

Ուրբաթ

Գիշերը ուշ քունս տարաւ:

Քանի մը անգամներ անկողնէս ելայ, և
պղտիկ զբաղումներ փնտռեցի, քնատու-
թեանս պատճառած ձանձրութիւնը փարա-
տելու համար:

Մատենադարանս խառնշուկեցի, հին լրա-
գիրներ աչքէ անցուցի, յետոյ նորէն գացի
անկողնիս ինկայ, խոնջած անդամներս հան-
գատացնելու համար: Բայց դարձեալ քունս
չտարաւ: Անգամ մը խանգարուած էր ան:
Ձեռն գիտեր ի՛նչ հատցնող չարչարանք էր այս
գիշերուն կրածս, Գողգոթայի, խաչափայտի
դժնդակ կեանք մը, զոր Le Calvaire չկար-
դացած, ես իմ մէջս կ'ապրէի:

Առտուն դէմ քիչ մը՝ քնացայ, թէ և
չա՛տ կարճ, բայց անո՛ւշ, անդ՝որ քունով մը:

Կիրակի

Թերթերուն մէջ կարդացի որ Քարմէն
Սիլվա, Ռումանիոյ համակրելի գրագէտ
թագուհին, Ռէն գետին վրայ կառուցած իր
սքանչելի դղեակը նուիրեր է այն գրագէտ-
ներուն, Ռումէն կամ օտարադղի, որոնք
անօք, խեղճ մնացած ըլլալով, ո՛չ մէկ դիւ-
րութիւն ունին ապրելու:

Օտարազգի՞ ալ: Անմիջապէս Նիրվանայի
մեր առաքեալը միտքս ինկաւ, հիւանդ դը-
րագէտը, որ չարաթ մը առաջ ճիշտ Ռումա-
նիոյ թագուհիին ակնարկել ուզած կեանքի
դժբաղդ խաղերէն ա՛լ ձանձրացած, Սրբա-
ղան Պատրիարքին դիմում կ'ընէր, դարձեալ
Հիւանդանոց երթալու համար: Եթէ մենք
մեր համայնքին մէջ չունինք մէկը որ մեր
հէգ դրագէտներուն բանաստեղծներուն օգնէ,
գէթ բարեսէր ու միեւնոյն ատեն դրասէր
հարուստներու առաջադրութիւններէն օգ-
տուինք:

Գրագէտները աղք չունին:

ՄԱՌԻ ՅԱՎԱՅՆՆԵՐ

ԳԻՏԱԿԱՆ ԶՐՈՆԻԿ

կոյրերը կը ծնան.— Ն. ձառագ. յթե եւ
նախով՝ բժշկութեան մէջ.— ձեւաբիւս ու
կեղծ աղամաններ՝ Ռասիովի առջեւ:

Բաւական ատեն անցաւ այն օրէն ի վեր,
երբ բոլոր աշխարհ կը հետաքրքրուէր ռա-
տիսի, իւրանիսի եւ ընկերներուն արտա-
սովոր յատկութիւններով, սակայն ցարդ նո-
րութիւն մը չէր լսուած անոնց գործնական
կիրառութեան մասին, թէեւ անգին, գիտուն-
ները ուսումնասիրութեանց խորը թաղուած
ըլլային:

Նորագոյն գիտական Հանդէսներէ կ'իմաց
ուր սակայն թէ Պէքլուէլի, Ռատիովի եւ Ն.
ճառագայթները սկսած են արդէն իրենց
գործնական բարեբար հանգամանքով ներկա-
յանալ բժշկական աշխարհին եւ մեծ սատար
ու օժանդակ հանդիսանալ՝ ըլլայ արտաճա-
նաչութեան (diagnostique), ըլլայ դարմա-
նութիւն (medication) պարագաներուն մէջ:
Ասոր ամէնէն փայլուն մէկ ապացոյցը կուտայ
Տոքթ. Լընտըն՝ կոյրերու վրայ կատարած իր
մէկ յաջող փորձարկութեամբ:

Ապացուցուած ըլլալով որ Ռատիովի դա-
նազան աղերէն արտաբերած անտեսանելի
ճառագայթները՝ յատկութիւնը ունին աչքին
մէջ պարունակուած հեղուկներուն լուսա-
փայլութիւնը զօրացնելու եւ այս՝ Գիւրիներու
եւ ժալալի պէս գիտուններու կողմէ, Տոքթ.
Լընտըն գեղեցիկ գաղափարը ունեցաւ կոյ-
րերուն, կեանքի այդ անժառանգներուն
լոյս պարգեւել՝ տեսնել տալով անոնց բոլոր
այն առարկաները, որոնք ձեռքի շօշափումով
միայն ծանօթ էին իրենց մինչեւ այն ատեն:
Փորձերը կատարուեցան այն կոյրերուն վրայ
սակայն, որոնց աչքին եղջերենին փխսուած
ըլլալով, լոյսի ճառագայթները չէին կրնար
ներս թափանցել՝ առարկան տեսանելի ընե-
լու համար աչքերուն: Թող ներուրի մեզ մեր
ընթերցողներէն՝ եթէ հոս աչքին նկարագ-
րութիւնը ու կազմաւորութիւնը ծանօթացնել

հարկ կը համարինք, նպատակ ունենալով
աւելի քաջ ըմբռնել տալ Տոքթ. Լընտընի
փորձին օգտակարութիւնը:

Մարդուն տեսողութեան գործարանը
գունդ մըն է շուրջ 23 միլիմէթր տրամագը-
ծով, գետեղուած դէմքին վրայ, ակնակապիճ
կոչուած խոռոչներուն մէջ: Կազմուած է
թաղանթներէ (membrane տակ. գար) եւ
թափանցիկ մարմիններէ:

1. Դուրսէն դէպի ներս կայ կարծրաթա-
ղանթը (*) (sclerotique) որ աչքին սպիտա-
կուցը (տակ. կեօզ ագր) կը կաղմէ. իր պաշ-
տօնն է պաշտպանել աչքը իր կարծրութեամբ
եւ դիմացկունութեամբ: Այս թաղանթը աչքին
առջեւի մասին վրայ եղջերենի (cornée trans-
parente) անունը կ'առնէ. իր թափանցիկու-
թեան պատճառաւ լուսեղէն ճառագայթները
կ'անցնին իր եւ բիւրին մէջէն ու կ'երթան
մինչեւ սառնենին:

2. Ակնածրարը (choroïde) թաղանթ մըն
է սև գոյնով, որ իր մէջ կը պարունակէ
շատ մը արեան նուրբ խողովակներ. պաշտօնն
է, չեւթեանը պատճառաւ, ծծել լոյսին այն
աւելորդ մասը, որուն պէտք չունի աչքը՝
պատկերներու կազմութեանը համար:

3. Ծիածանը (iris) մաշկ մըն է, բո-
լորածեւ, որ ակնածրարէն ընդունուած լոյսին
քանակութիւնը կը չափաւորէ՝ պատկերներուն
յատկութիւնը ապահովելու համար:

4. Ցանցենին (rétine) աչքին ամենահիմ-
նական թաղանթն է, որուն վրայ կը կաղ-
մուին մեր տեսած առարկաներուն պատկեր-
ները՝ շրջեալ ձեւերով, ինչպէս լուսանկար-
չական գործիքի մը մէջ: Տեսողական ջիղը
ցանցենիին մէջ կը տարածուի բազմազան
ճիւղաւորումներով եւ ցանցի մը կերպարանքը
կ'առնէ: Անոր ամէն կողմերն ալ հաւասար
բազէս զգայուն չեն. երկու կէտեր կան
ցանցենիին մէջ. 1. կոյր կէս (point aveugle)
եւ դեղին կէս (point jaune): Առաջինին
վրայ (որուն դիրքը կը համապատասխանէ
բուն տեսողական ջիղին սկզբնաւորութեան)

(*) Եղին, ձիուն աչքին այս մասը աճա-
ռուտ (կրճիկ ունեցող) է, իսկ թռչուններունը
կէս մը քարացած:

կազմուած պատկերները չենք տեսներ և ընդհանրապէս երկրորդին վրայ կազմուածները կը տեսնենք, որով մեր տեսնել ուզած առարկային անանկ դիրք մը կուտանք որ այս դեղին կէտին վրայ տպաւորուի առարկային պատկերը:

5. Ներսի կողմէն ցանցենիին կցուած ուրիշ թաղանթ մըն ալ կայ, այն է, ապակե ցիւց (membrane hyaloïde):

Գալով թափանցիկ մարմիններուն. — Առաջինն է եղջերենին, որ ինչպէս ըսինք, կարծր թաղանթին երկարած դուռն է: 2. Զրահիւթը (humeur aqueuse), որ վճիտ, թափանցիկ հեղուկ մըն է և կը գտնուի ծիածանին և եղջերենիին մէջտեղ, 3 միլիմէթր թանձրութեամբ: 3. Սառնենին (crystallin) երկկորնթարդ (biconvexe) դասնաձև ապակիի մը կը նմանի, 4 միլիմէթր թանձր և թափանցիկ, և կը գտնուի ծիածանին ետին ու կը համապատասխանէ բիբին (pupille) ճիւղ կեդրոնին: Սառնենին կ'ընդունի առարկայէ մը եկած լուսեղէն ճառագայթները, որոնք ծիածանէն չափաւորուած են և բեկանելով կ'անցնեն զանոնք իր մէջէն: Այս բեկեալ շառաւիղներն են որ ցանցենիին վրայ կը կազմեն առարկային պատկերը: Եւ վերջապէս 4. Ապակեղէն հիւթը (humeur vitrée) որ սոսնձանման նիւթ մըն է փակցտուն և պարփակուած է սպակենիին մէջ: Աչքին գունտը գրեթէ այս նիւթով լեցուած է: Զրահիւթին պէս՝ ապակեղէն հիւթն ալ լուսեղէն շառաւիղները կը բեկանէ, սակայն ոչ այնչափ որչափ սառնենին և անոր դերը՝ պատկերներու կազմութեան մէջ՝ չատուար է:

Արգ, ո՛ր և է առարկայէ մը եկած լուսեղէն, շառաւիղները կ'անցնին եղջերենիէն քրահիւթէն և բիբէն, սառնենիէն կը բեկանուին, կը թափանցեն ապակեայ հիւթին ու կ'երթան կազմել շրջեալ ձեւով պատկեր մը ցանցենիին վրայ: Տեսողական ջիղը, իր ճիւղաւորումներուն մէջոցաւ կըզգայ առարկային տպաւորութիւնը ու կը հաղորդէ զայն ուղեղին և մենք կը տեսնեմք առարկան:

Կը տեսնուի ուրեմն թէ մինչեւ որ արտաքին առարկաներէն եկած լոյսի ճառագայթ-

ները չանցնին սառնենիէն, մենք չենք տեսներ: Հետեւաբար այն մարդիկ որոնց եղջերենիին վրայ լուսն (cataract) իջած է և կամ սառնենին վնասուած է ու ցանցենին առողջ, լոյսը ներս չի կրնար թափանցել և հասնիլ ցանցենիին:

Տոքթ. Լընտընի փորձը ահա այս կէտին մէջ կը ստանայ իր կարեւորութիւնը: Յարգելի գիտունը նախապէս գիտէր, որ, եթէ մուծին մէջ Ռատիոմի աղ պարունակող շիւ մը արտեւանուէրն և կամ քունքին մօտերը դրուէր, աչքը լոյսի զգացողութիւն մը կ'ունենար և աչքին հեղուկները կը լուսափայլէին՝ ռատիոմի ճառագայթներուն ազդեցութեամբ:

Տոքթ. Լընտըն իր փորձին համար կը գործածէ, մուծ սենեակի մը մէջ, լուսանկարչական «զգայուն ապակի» մը, որ պատրաստուած է platino - cyadure de baryumով: Ռատիոմի աղ մը, օրինակի համար, պրոմիւր տը ռատիոմ, զնդասեղի գլխու քանակութեամբ կը դնէ այդ ապակիին մօտերը, և որովհետեւ պարիոմ կոչուած տարրը ի բնէ ունի լուսափայլելու յատկութիւնը, ռատիոմի շառաւիղներուն ազդեցութեամբ կը զօրանայ անոր լոյսը: Այս ապակիին առջև (աչքին և ապակիին մէջտեղը) կը դնէ որ և է առարկայ մը: Ռատիոմի ճառագայթներովը զօրացած լուսանկարչական բլաքը կը լուսափայլի, առարկան կըստանայ անկէ լոյս, զոր կը ղրկէ ողակի կոյրին աչքին ցանցենիին վրայ՝ ըստ որում Ռատիոմի ճառագայթները թափանցականութիւն ունին: Ինչպէս ըսի, այս գործողութիւնը տեղի կ'ունենայ մուծ ու խաւար սենեակի մը մէջ: Խեղճ կոյրերը նախ անձեւ ու անորոյ լուսաւոր մակերես մը կը նշմարեն ու յետոյ կըսկսին տեսնել հորիզոնական և ուղղաձիգ գիծեր, հետզհետէ՝ բազադերեալ, կոր գիծեր, վերջապէս առարկան ամբողջ: Ու անպատում ուրախութիւն մը կըզգան կոյրերը, իրենց աչքերուն միջոցաւ տեսնելով այն առարկաներու բազմութիւնը, զոր շօշափելիքով միայն տեսնել կարող կ'ըլլային մինչև այն ատեն: Կոյրերը կը դադրին տեսնելէ, եթէ ռատիոմի աղը վերցնենք ա-

նոնց աչքին քովէն և շատ կարճ կը տեսէ անոնց ղգացած հրճուանքը։ Ու նորէն կ'իշնան անդնդային խաւարին մէջ։ Գիտունները կը շարունակեն այս կենսօգուտ փորձերը, աւելի դժուարաւ ձեռք գտնելու և միանգամայն անվնաս հանգամանք մը տալու ռատիոմի աղերուն։ Տոքթ. Լընտընի այս փորձը մեծ հորիզոն մը բացած է գիտուններուն։

*** Ն. ճառագայթները, որոնց մասին երկարօրէն գրուած է Մասիսի մէջ, սկսած են գործնական կիրարկութեան մէջ մտնել բժիշկներու ձեռքով, օգնել անոնց՝ ախտաճանաչութեան կնճառ գործին մէջ և կարգ մը հիւանդութիւններ ճանչցնել բժիշկին ամէկ մանրամասնութիւններով։ Այսպէս, Պ. Ժիլպէր Պալլէ կ'ըսէ թէ անդամալուծութեանց ենթակայ եղողներու ջլհերը չլսուած ըլլալով, չափազանց տկար կ'ըլլան Ն. ճառագայթներ արտաբխելու։ Կրածնի ծծըմ բուկի լուսափայլութիւնը շատ ազօտ կ'ըլլայ երբ հիւանդ դնդերի մը վրայ դրուի և ընդհակառակը, զօրաւոր՝ երբ առողջ դնդերի մը վրայ է։ Փորձերը առաջ տանելով տեսած են թէ անդամալուծմանց տեսակներուն համաձայն դնդերներու լուսափայլութիւնը զանազան երեւոյթներէ կ'անցնի և արդիւնքը սա կ'ըլլայ որ բժիշկը գիտակից կը դառնայ հիւանդութեանց տեսակներուն և անոնց զանազան տարբերութեանց։ Այս դրութեամբ վերջերս արգանդային անդամալուծութիւն մը (paralysie hystérique) կարելի եղած է զանազանել գործարանային անդամալուծութեան մը (paralysie organique)։

Մեռած մարդու մը վրայ կատարելով կարգ մը փորձեր, տեսնուած է որ դիակին դնդերները, սիրտը բնաւ ազդեցութիւն չեն ըներ կրածնի ծծմբուկին վրայ, մինչդեռ երբ դիակէն անջատենք ջիղերը, ուղեղին լուսափայլութիւնը կը շարունակուի՝ հետզհետէ սիւրբանալով սակայն և վերջապէս կը սպառուի մահուան հետեւեալ օրը։

*** Տոքթ. Տառիէ վերջերս Բարիզի բժշկական Ակադեմիային հաղորդեց թէ ռատիոմի աղերէն բխած ճառագայթները անզգայացուցիչ (insensibilisateur) յատկութիւն ունին

և փորձերով հաստատած է թէ ջիղերու ցաւերը (nevralgie) կատարելապէս կը բուժուին։ Երեսի անդամալուծութեան (paralysie faciale) բռնուող մը, մէկ օրէն միւսը ապաքինած է և այս դեռ շատ նոր է, ռատիոմով։ Եւ դեռ ուրիշ կարգ մը ջլային հիւանդութեանց մէջ գնահատելի արդիւնքներ տուած է խորունկ հետաքննութեան արժանի։

*** Ռէօնթկենեան ճառագայթներէն յետոյ կարգը Ռատիոմիւն է ճանչնալու համար թէ ադամանդներուն կամ լաւ ևս է ըսել թանկագին քարերուն ո՞րը կեղծ և ո՞րը ճշմարիտ է։ Անշուշտ գիտէ ընթերցողը թէ Ռէօնթկենի ճառագայթներով լուսանկարուած կեղծ ու ճշմարիտ ադամանդները լուսանկարչական ապակիին վրայ տարբեր հետքեր կը թողուին։ Կեղծերը՝ անթափանց ըլլալով՝ Բ. ճառագայթներուն համար, ապակիին վրայ մութ ստուեր մը կը ձգէին, մինչ ճշմարիտ ադամանդները թափանցիկ ըլլալով թոյլ կուտային որ իրենց մէջէն անցնին այդ շառաւիղները և ապակիին վրայ ձերմակ հետք մը կամ լաւ ևս է ոչինչ կը թողուին։ Այս աշխատութեան համար երկար ժամանակի և ահադին գործիքներու պէտք կայ, մինչ Բ. ճառագայթներուն տուած արդիւնքը ռատիոմի ճառագայթներուն աղդեցութեամբը կարելի կ'ըլլայ ձեռք բերել, կարելի եղածին չափ արագ կերպով և առանց մեծ գործիքներու օժանդակութեան։

Լուսանկարչական ղգայուն ապակի մը ծածկուած է սև թուղթով և դրուած մութ խորանարդ տուփի մը մէջ։ Այս ապակիին վրայ կը դնեն այն ադամանդները, որոնց ճշմարտութեան վրայ կը տարակուսին։ Տուփին մէջ վերի կողմէն կախուած է ապակեայ փոքր չիլ մը, որ ռատիոմի աղ մը՝ կը սարունակէ։ Քանի մը վայրկեան վերջը, ապակիին անցնելով լուսանկարչական գործողութիւններէն, կը տեսնենք որ ադամանդը, որ կեղծ էր, սև ուրուագիծ մը թողուցեր է ապակիին վրայ և այսպէսով կարելի կ'ըլլայ մէկ նայուածքով հասկնալ և զանազանել ղայն ճշմարիտ ադամանդէն։

Ապահովաբար դահարավաճառները պիտի

ըլլան առաջին անգամ զանգասողը այս գիւտէն, սակայն մեղք որ մտիկ չպիտի ընեն իրենց ու ինքնին պարտաւոր պիտի ըլլան ակամայ խորշիլ՝ գոհարապաշտ տիկիները խաբելէ:

ՆՈՒՊԱՐ

Ծ. Խ. — Թիւրիմացութիւն մը փարատելու համար, հարկ կը համարինք յայտարարել թէ մեր գիտական աշխատակիցը՝ Նուպար՝ բոլորովին տարբեր անձ մըն է և չէ՝ այն Նուպարը ինչպէս կը չփոթեն օմանք, որ Գատըգիւղէն կը գրէ օրաթերթի մը, թաղային զանազան խնդիրներու վրայ:

ԷՐԻԿԿՆԻԿ

(ՆՈՐԱՎԷՊ)

Ա.

Պատուական, գրեթէ դարաւոր ազնուութիւնով առաջ եկած գերդաստանի մը շառաւիղները կը կազմէին Մարտիրոսեանները, մարդեր՝ իրենց բարերարութիւններովը ու կրօնասիրական ջերմիկ զգացումներովը ամէնուն աչքին լոյսը, գաւառացիական տիպար ընտանիք մը վերջապէս, այն աստիճանները:

Ազգականներու և շատ մօտիկ վերաբերեալներու անհուն օղակ մը կը պարուրէր զիրենք արդէն երկար ժամանակէ մը ի վեր. հիմակ՝ ասոն մըն էր որ ա՛լ թողած էին հեռաւորներու հետ խնամութիւն հաստատել, անոր համար որ իրենց մէջէն մէկ քանինները պապենական հարստութեան այս կերպով փոճացումը կը կանխատեսէին, ու կուգէին որ սահման մը, չափ մը դնէին ասոր, ո՛չ աղջիկներին տալով ու ո՛չ ալ առնելով անանկներունը՝ որոնք պարզապէս ազգակցութեան օղակէն դուրս կը մնային:

Գոնէ այսպէսով, կ'ըսէին Մարտիրոսեան եղբայրները, ունեցած բովանդակ հարստութիւնն իսկ մեղմով դարձեալ մերիններուն բաժնուած ըլլայ պիտի, ու ժառանգականութեան օրէնքով ալ իրենք չպիտի կորսնցնէին շատ:

Եւ յետոյ, իրենց ընտանեկան այս հաշիւներէն դուրս, շատ անգամ առիթները ունեցած ալ էին լեցուն լեցուն բարերարելութամբ ու տէրտէրին ու դեռ շատերուն, երբ պէտքը կը զգացուէր կամ մասնաւոր խնդրանքներ կ'ըլլային: Եղան մարդեր որ շարամօրէն մեկնել սկսան բարերարելու այս կերպերնին, ու ինչպէս ուրիշներուն՝ անոնց ալ ամէն մէկ անգամի ողորմասիրութեանը անուն մը, սանկ քմծիծաղով առաջ քշուած նշանակութիւն մը փակցուիլ սկսաւ ամէն դիէ, այնպէս որ օրին մէկը խեղճուկ թաղային վարժարանը եղաւ տուժողը, քանի որ տարուէ տարի կ'որիկ դուժար մը նուէր կը ստանար:

Պէտք է ըսել որ առջի ժամանակներու հարստութիւնը ազնուացումը չմնաց Մարտիրոսեաններու վրայ, թէպէտեւ անոնց արտաքին կեղեւը ու շուքը տակուին վտնակ մը լակոտներու կրնար հմայք ու պատկառանք ազդել, որոնք շարունակ՝ դրեթէ սերունդներով անոնց դուռը կ'ապրէին կուշտ ու կուռ:

Քայքայումի պէս բան մը, որ անզգալի կերպով սկսած՝ երկար ատենէ ի վեր կը շարունակէր ընտանիքին մէջը, օրը օրին աւելի գէշցնող հիւանդութիւններու նման որոնք ոչ բժշկին այցեգիւններուն հոգը կ'ընեն ու ոչ դեղերով դեղադրերը, այնքան անվկանդ ու անաւելի են անոնք:

Ա՛լ տեսակ մը անուն եղան Մարտիրոսեանները որոնք իրենց ընտանեկան անհաւատալի անբարոյութիւններէն դուրս եկած՝ զգայալիկ ու տատանող կեանքով մը քաջքընդիլ սկսան, տակաւին ճոխութեաննուն մէջ չզգալով այն անհելի ու անակնկալ փոփոխութիւնը որին ենթարկուած էին իրերու ընթացքովը:

Յանկարծ սակայն՝ երբ նիւթական անկումի մը առջև դտան ինքզինքնին, դժուար չեղաւ տեսնել գերեզմանը իրենց հարստութեան ու բովանդակ գերդաստանին ալ, ուր պէտք էին ներել ամէն բան, ա՛լ ետ չառնելու համար զանոնք:

Միայն հէգ աղջիկ մը բոլոր այս խառ-

նախնդորութիւններու մէջէն դուրս ելած ըլլալով մէկտեղ կրցած ըսել ալ որ, բնութեան մէջ ալ ինչպէ՛ս անուշաբոյր ու քընքուշ մեխակը կ'ապրի վայրի ու մերկ լեռներուն կողքովը փուշերուն ու անօգուտ կաղաչային մօտը . . . :

Բ .

Բոլորովին ընկճուած ու բզիկ բզիկ եղած կըզգար ինքզինքը Զապէլ : Ընտանիքին հանդիպած շատ մը դժբախտութիւնները խորունկ վէրք մը զետեղած էին սիրտին մէջը : Լացած էր շատ անգամ, ու չէր իսկ համարձակեր դրացիներու գուռները ափ առնել՝ քիչ մը սփոփուելու, սիրտ առնելու համար : Կը վախճար որ ամէն դիէ անարգանքներ պիտի տեղացնէին գլխին, պիտի ըսէին որ իրեններուն, մէկ խօսքով Մարտիրոսեաններու ամօթի սեւէն իր ճակտին վրայ ալ քաշուած կար, որովհետեւ անոնք ամէնքն ալ շատ շուտ մոռցած էին այդ ընտանիքին երբեմնի պատուականութիւնը, ու ա՛լ հմայքը չէր մնացած այն ա՛ռունին որը եկեղեցիի խորանէն օրհնութեան ձայներով կը յորջորջէին քահանաները, ուր մտնել կը խափէր հիմակ Զապէլ, անոր համար որ իսկապէս մեղապարտ ու ոչինչ հոգիներ պիտի յանդգնէին թերեւս թքնել իրենիցին վրայ, որ արատ մը, նկատելի բիծ մը չունէր երբեք : Տասնըչորս տարիներու մէջ ճեփ ճերմակ շուշանի մը կեանքը ունեցած էր ինքը, այնքան անմեղ, այնքան սիրուն էր : Իր մայրը բարի միամիտ կին մըն էր, որ երէկուան չափ շուտ մեռած էր սրտի կսկիծէն : Եւ որպէս զի Զապէլին թեթեւ ցաւ մը չպատճառէ, մեռնելէն քիչ առաջ դողդալով ու բոլորովին անզօր, իր շատ սիրուն աղջկան փախսացած էր՝ թէ պիտի գար քիչ ատենէն, թէ երբ քիչ մըն ալ մեծնար ու ամուսնանար համեստ և պատուական երիտասարդի մը հետ, շատ երջանիկ պիտի ըլլար ինքը, Զապէլ :

Տարի մը անցած էր մօրկանը մահէն, ու իր շուրջի ընտանեկան տառապանքներու մէջէն մանկամարդ աղջիկը մէկ անգամ միայն՝ որ մը արեւմուտքի ատեն զգացած էր ներսիւքին յուզում մը, անօրինակ գարկ մը,

որը չէր կրցած մեկնել, Գիշերը մինչև լոյս չէր կրցած քնանալ, միայն երբեմն կ'անդրադառնար այն երիտասարդին վրայ՝ իրիկունը, որին հանդիպօ՞ւմը տուած էր իրեն այդ նոր զարկը, չէր կրնար ըսել :

Առաւօտուն կըզգար որ նոր շողք մը կար աչքերուն մէջը, աւելի յանդուգն կրցած էր ըլլալ, կ'ուզէր ծանօթներու քով երթալ, գտնելու համար իրեն պէս մանկամարդ, սակայն նոյն յուզումներուն ենթարկուող աղջիկներ, որոնք թերեւս պիտի կրնային իրեն շատ մը բաներ ըսել, ու ինք հարկաւորապէս պիտի խօսէր, պիտի չուզէր որ ըսէին բաներ մը իր սիրոյն նկատմամբ որուն առաւպանքը աւելի հաճելի ու կրելի պիտի թուէր իրեն, անմամն բոլոր միւս վիշտերուն, որոնք աւմօթէ մը կը ծագին :

Կըզգար սէրը, բայց չէր կրնար որակել, այնքան մը անբացատրելի ու անորակելի կը թուէր իրեն : Երբոր կուլար, ա՛լ գիտէր որ սէրն էր զինքը լայնողը, կ'ուրախանար նմանապէս, միայն . . . միայն կ'ըսէր ինքզինքին «չեմ յագենար Յակոբիկը տեսնելէ, չեմ ձանձրանար անոր քովը մնալէ, իրեն չունչովը հարեցած» : Ու ամէն անգամին որ կը համբուրէր մէկ մը Յակոբիկը, կը տանէր պզտիկ գրպանի հայելին, ու մաղերը մէկդի առած կը նայէր լաւ մը դէմքին, ու կըզգար որ աւելի գեղեցկացած էր :

Ընդհակառակը սակայն՝ Յակոբիկ միջակ ու պարզակեաց ընտանիքի մը զաւակը, գրեթէ դրացիներ ու բարեկամները Մարտիրոսեաններու որոնցմէ միայն Զապէլը մնացած էր—վերջին ծայր ջղային նիհարուկ երիտասարդ մը, գրեթէ գաղտագողի կը սպորդէր Զապէլի մօտ, անոր մօտը վայրկեաններ անցընելու համար, հեշտին ու տարփալից : Ու իր որսին ետեւէն իյնող բաղէներու պէս իր մագիլներով ճանկել, մէկ անգամ ընդոռնել կուզէր Զապէլը իր սէրին ու հեշտանքին բովանդակ ուժովը, եթէ սակայն յաջողէր : Ատոր համար, սակայն, իր կատաղի դողումը թեանը մէջ կը դողային իր շուրթները, ու չէր կրնար փոխանակել Զապէլին այն միամիտ ու անուշ գգուանքներովը զորս անիկա պա-

ղատանքի մը պէս կ'արձակէր իր շուրթներէն ու կ'երդնուր որ կը սիրէր, կը պաշտէր Յակոբիկը, չար Յակոբիկը:

Յակոբիկի ծնողքը երկար ատեն անուշադիր գտնուած էին այն յարաբերութեան նկատմամբ որ կը մշակուէր Զապէլի ու իրենց զաւկին միջև: Վերջ մը տալ պէտք էր, որովհետեւ դուռնէ ի դուռ եղած փսփսուք, ներու կծիկ մը արդէն սկսած էր քակուիլ ու երկարած գուր: Պատահեցաւ սակայն որ երկար բարակ պէտքը չունեցան այս մասին մտածելու:

Յակոբիկ իրիկուն մը աւելի հաստատ մտադրութեամբ տունէն դուրս նետուեցաւ իրագործելու, գլուխ հանելու համար երկար ատենէ ի վեր ծրագրած, ձև ու կերպարանք տուած իր բովանդակ լիտութիւնները՝ փոխարէն այն մատղաշ շուշանի նմանող սէրին զոր Զապէլ կը տածէր իր մէջը, որովհետեւ ա'լ անգամ մը սիրած էր Յակոբիկը այնքան շատ որ չպիտի ուզէր ոչ մէկին հետ փոխել այդ սէրը: Պիտի ամուսնանային, ժառանգ մնացած հօրենական անթիւ կալուածներու եկամուտովը պիտի ապրէին:

Ու Յակոբիկ հազիւ թէ իր միտքը յայտնած, կատաղի բազուկով մը Զապէլը գրկել փորձելու ատենն իսկ, յանկարծակիօրէն խնկորոյս թռչունի մը պէս բոլորովին փետուրաթափ եղած, դէպ ի տուն իր ճամբան շտկելու ատենն իսկ չկրցաւ վրայ բերել որ ինչքան բուռն կերպով յարձակած էր Զապէլ իր վրան, ու գրեթէ թեթեւ խնձորի մը պէս դուրս գլորած էր զինքը, ա'լ յաւիտենապէս մերժուելու պատրաստ:

—Ու՛ ինքզինքին գալով, խաբուած եմ, խաբուած եմ եղեր, միմիջեց Զապէլ երկար ատեն: Պարապ տեղը սիրեցի զինքը, պարապ տեղը գիշերները մօտս ըլլալ կարծեցի, ու խորհեցայ որ Յակոբիկ ինքն ալ կը սիրէր նոյն սէրով ու նոյն արցունքով որոնց ներքեւ շատ տառապեցայ ես: Ա՛յո, կը սիրէ եղեր իս Յակոբիկը որպէսզի... : Խաբեբան:

Գ.

Յուսախաբ եղած աղջկան մը կսկծալի օրերը ունեցաւ Զապէլ յակաւին երկար ա-

տեն, առանց հաշտեցնելու իր զգացած շատ անկեղծ սէրը Յակոբիկի ներքին գարշ մտադրութիւններուն հետը, վերջը սովորական աղիճի մը պէս ձգելով հեռանալու համար քովէն, մինչև որ ժամանակը եղծեց արշտը կեց յիշատակի ամէն հետքերը իր միտքէն, ա'լ բոլորովին անվերադարձ:

Գաւառական այդ պղտի քաղաքին մէջ տարածայնութիւններ կծիկի մը պէս կը քակուէին, աւելի մեծցած ու այլափոխուած: Ոմանք կատարեալ աղիճի մը գոյնը տուած էին հէգ Զապէլին, ուրիշներ կը մեղմէին իբր թէ նկատելով որ այդ ընտանիքին պատկանող աղջիկ մը տարբեր չէր կրնար ըլլալ: Թէ քանի խաբող նայուածքներով միամիտ Յակոբիկը իր ծուղակին մէջ ձգած է, այն պարկեշտ ու բարձր յատկութիւններով օժտուած Յակոբիկը, որը ոչ մէկ ատեն ունեցերը վեր առած էր դրացիի աղջիկները դիտելու, ու ոչ ալ երդիքներուն տակը, ախոռի դռներուն մօտերը աղօթրանէն առաջ կամ իրիկունը լսած էին իր որ և է գաղտագողի փսփսուքները...:

Ու շարունակուեցան պառաւ ճատուկներու այս շատ աղստոտ զրոյցները ծամոց մը ձիւթի պէս, մինչև որ ամէն բան հանդարտելէ վերջը Մարտիրոսեաններու մօտիկ վերաբերեալները կարող եղան խորանին առջև տէրտէրին ու վարդապետին պսակովը ա'լ անբաժանելի հռչակել ամուսնութիւնը Զապէլին՝ ուրիշի մը հետ:

Գրիգոր որուն ականջը հասած էին արդէն այն ամէն զրոյցները որոնք Զապէլը կը դատապարտէին այնքան անիրաւօրէն, երկար բարակ չմտածող մէկն էր, կուզէր այս կերպով շատ երջանիկ ու հանգիստ ապրուստ մը ձեռք բերել, քանի որ բաւական շատ արտերու ու կալուածներու կրցած էր տիրանալ Զապէլ ժառանգաբար: Հանգիստ ու խաղաղիկ կեանքի մը կը տենջար արդէն, ատիկա ինչ կերպով ալ ձեռք բերուած ըլլար: Մինչև իր քսանհինգ տարիքը ոչ մէկ գաղափար կրցած էր կաղմել սէրի, ամուսնութեան հաճոյքներուն վրայ: Գոնէ այդ տարիքին բերումը պիտի ըլլար քիչ մը վառ-

վառնութեան ու զգացումներու առատ յորդ-
գեղումները: Ոչ մէկը ունեցած էր ինքը,
ընդհակառակը սիրած էր միշտ ժամէն չհե-
ռանալ, համբերութեամբ մեծ պահքը պահել
ու սանկ թոյլ ու բոլորովին ճգնաւորական
մէկը մնալ: Դեղնած ու ա'լ կաշիացած դէմք
մը իրենք, որին վրայ հազիւ թէ առնակա-
նութեան շնորհքը եղած մէկ քանի թել մա-
ցիր բուսած էին անկանոն կերպով:

Իսկ Զապէլ՝ որին անձկութիւններու օղա-
կաւորումին մէջ չկրցեր էինք վեր առնել
առաւելու թիւնները իր փիղիքականին, տա-
կաւին կը մնար նոյն հիանալիօրէն գեղեցիկ
աղջիկը սրտի ու մտքի աղնուացումին հետը,
այնքան արտայայտիչ ու ընկճող էին իր նայ-
ուածքները: Նախնական կրթութիւնէն գերծ
չէր մնացած, իր ծնողքը քան մը խնայած
չէին այդ մասին: Ու Յակոբիկի հետ յարա-
բերուելէն ետքը, երբ ա'լ ընկճուած ու
կտոր կտոր եղած կըզգար ինքզինքը, գրեթէ
չուզեց երկար առեմն տունէն դուրս չելլել,
հասակակից աղջիկներու այցելելէ կ'ամչնար,
այնքան ծանր կը գտնէր անարգանքի ու ամ-
բաստանութեան բեռը իր վրին վրայ: Ու
ատոր համար կարծես Գրիգորի հետ ամուս-
նանալը մինչև վիզը ծուռ ու աչքերը գետ-
նին յառած կը մնային երբ պատահէր որ
փողոց ելլէ:

Հիմակ այս ամուսնութիւնը պիտի ան-
յայտացնէր անարգանքի բոլոր այն հետքերը
որոնք հեռուէն անիրաւ տեղը նետուած էին
իր ճակտին:

Ու ապրեցան միատեղ:

Դ.

Աստուած գիտէ ինչքան նոր ու ճիւղա-
ւորուած տաղնապներ ունեցաւ Զապէլ անկէ
վերջը ամուսնութեան օրերուն: Ուրիշները
կ'ամուսնանային՝ ընտանեկան օջախին շուրջը
սէր գգուածք վայելելու համար, իրեն հա-
մար ո'չ մէկը կար: Իրիկունները ամէն ան-
գամ որ իր զգացումներուն ու կնոջական
շատ բնական հակումներուն անձնատուր՝ ու մայ
մը վայելքը կ'ուզէր ունենալ ամուսնութեան,
կուզէր մէկտեղ իրարու գրկի մէջ նետուիլ,
սանկ թաղուիլ մոռացութեան աշխարհներուն

մէջ, հոգ չէր թէ մէկին մօտը զոր չէր ճանչ-
ցած ու սիրած, ու կը տեսնէր Գրիգորի կող-
մէն կատարեալ անտարբերութիւն մը, անըզ-
գայութիւն մը որ խորունկ խորունկ կը քը-
նացնէր զինքը անկողնին մէջը, փայտի պէս
անշարժ:

Ու գիշերները գրեթէ միշտ, երբ անկա-
կը խորթար անշնորհք կերպով, Զապէլ ներ-
քին յուզումէ մը մղուած՝ չէր կրնար աչքը
գոցել, կը սպասէր... կը սպասէր շարունակ
որպէս զի Գրիգոր արամաղելի ըլլար իր պար-
տականութիւնները կատարելու: Ինքը իր
զգացումներուն և մտածողութիւններուն
առջև կը խպնէր, աղտոտ ու բոլորովին
գարշ կրնային թուել զիջելուան այդ խոր-
հուրդները, բայց կը մխիթարուէր ու կը
ցանկար ատոր... այս անգամ ալ զուակ մը
չունենալով նոր անարգանք մը բերած չըլ-
լալու համար ինքզինքին: Որովհետեւ գիտէր
թէ գաւառական իր շրջանակին մէջ ամուս-
նութիւնը, փիղիքական թերութիւնէ գերծ
կրնար նկատուիլ: Այսպէս տարիներու միջո-
ցին ալ դեղնած մօմ մը դարձաւ ինքը:
Վերջէն վրայ հասաւ նախատինքնորու այն
տարալիւ ու ծեծը, աղտոտ յանդիմանանքները
Գրիգորի ու դրացիներու կողմէն, այնքան
յաճախակիօրէն որ անձնասպանութեան ուղեց
գիւմել ու չյաջողեցաւ ալ:

Իր կալուածներուն եկամուտովը կ'ապ-
րեցնէր ինքզինքը ու Գրիգորն ալ, բոլորու-
մին անօգուտ ու անգործ այս աղամարդը
որուն վրայ հիմակ փողոցի լակոսներն ալ
պիտի ուղէին թքնել երբ այնքան անիրաւ
ու թերացող մըն էր ֆիզիքականովը ու
կեանքովը: Ստրուկի կեանքը՝ որին ենթար-
կած էին Զապէլը—այդքան մանկամարդ ու
շնորհալի աղջիկ մը—դառն տպաւորութիւն-
ներու ներքև ձգած էր այլ ևս բոլոր անոնք
որ մօտիկ գիտակցութիւնը ունեցան վերջէն
Գրիգորի ներքին կեանքին ու թերի կողմե-
րուն վրայ խորունկ նոգկանքով մը սակայն:

Ու ա'լ քիչ մը սփոփանք սփռուած գտաւ
Զապէլ իր շուրջը, նախնի ընկերակիցներ
համակրալից խօսքերով մօտենալ սկսաւ, ու

ինքն ալ մէջի ներքին ատելութիւնը մեղ-
մացուցած զգաց՝ որ այնքան վատորէն նե-
տած էին զինքը Գրիգորի մօտ, որ տարի-
ներով թերացած էր իր ֆիզիզականով, ու
չէր ալ կրցած ըլլալ էրիկ մը որ կըսփոփէ,
կը սիրէ վերջապէս, ու թոմարուիկ զաւակ-
ներ կը պարգեւէ . . . :

Զարմանալիօրէն սակայն, երբ դրացիներ
ու գիւղի քահանաները մէկ կերպ հասկա-
ցողութեան կրցած էին բերել իրար, առանց
բաժնել կարենալու զանոնք, Զապէլ երբ
խօսքը կ'ըլլար Գրիգորի «իմ խորթ եղբայրս
է» կ'ըսէր, ու Գրիգոր երբ պէտքը ունենար
Զապէլի անունը տալու, «Բոյր» կ'ըսէր ա-
մօթի աչք մը պտտոյնելով շուրջը գաղտուկ
կերպով :

ԽՈՍՐՈՎ ԴԵՆՆԵՍԱՆ

ՆՈՐԵՐՈՒ ԲՍԺԻՆԸ

ԾԵԾԿՈՒՆԸ

Ածուներուն մէջ հիբերուն քննոյ
կը վարանի հուսկ հըմայն հոսեւան .
Պերն ցոյժ մ'արեւեկն կը գրգուէ անու
Փայփալանքներով ծաղիկն իրիկուան :

Խանդաղասանքի մէջ, ցոյժ ու ծաղիկ,
Բաժանումներու ցաւին անգիտակ,
Արբօն փարումով սիրոյ խաղաղիկ
Վայելին թովքը կ'ըմպեն անուշակ :

Ու մէկը չ'ըսեր անոնց, «Իրիկուն
Պիտի ընէ ձեռ գրգուանքին վրան» .
Կ'անհետի ցոյժ մութին մէջ, նըկուն,
Ու կը քարամի ծաղիկն հոսեւան :

Բերա

ՕՐ. Ս. Պ.

ՍՊԵՐԼԵ ՈՒՍՏԸ

Իրւղը կ'առնէ մինչդեռ մըրափ մ'ալ հետին
Սակաւաքիւ կարաւան մը կիներու
Օրհներգելով օրուան ժամերն առաջին
Ճամբայ կ'իյնայ յետն ի վեր Սուրբ Մինասու :

Արեւելքն բուռնով մըռու կը ծորի՝
Բոց արեւուն նեղութիւն փոխարէն .
Գեշ պուրակին վարդերուն մէջ ալ վայրի
Թռչունները դեռ գիւղ գրկի կերակուն :

Արահետին ծաղիկները քարմ աղփուն,
Իրենց քննաք բաժակները կը լուան
Պսպացող կոյս շողերով . կիներուն
Կ'ուժաւորին ալելուներն առնուան :

Վարէն հասնող պարն աղջկանց հերարակ
Հիւսուելով այդ կարաւանին յամբողջաց
Կը ժամանեն հին ծառերուն քեւին քակ,
Որոնց կասարն Սուրբին Ոգին Ե քառած :

Խեղճ մասուն մ'որ ցուրտ ու պայծառ ջուրին
Երկար օրեր մընաց այդպէս խոկալով՝
Կ'ունկընդրէ արդ փունջ մը աղօթք երկնանմ,
Բուրումնաւէ՛ ինչպէս ստալսն նոգեթով :

Նւ հրնօրեայ առանակներ երկաթէ
Պատուանդանք կ'ըլլան նիհար մոմերուն,
Որոնց լուծուող հո՛ւր իրանէն կը կաթէ
Աղօթք իղձեր՝ ծաղիկն, սիրտը քեւ կ'առնուն :

Վ. ՆՈՒԿ

Պարտիզակ

Կ'ը ինչորեք Սամսոնի, Թօքաթի եւ
Կիւրինի մեր գործակալներէն որ փութան
կարգադրել Մասիսի բաժանորդագրութեանց
հաշիւները :

ԱՆԱՆՈՒԹԵԼ

Բլուրներու կողմն կամ դամբարաններու շուրջ, ուր քաղքենի ժխորին արձագանգն իսկ չի հասնիր, իր մանր ու ամփոփ ընծիւղները կը տարածէ անանուխը. գետնի շիւղին հետ պիտի չփոթէիր զան, եթէ իր մեղկ բոյրը իսկոյն չգլուէր ռուսագերդ, այնքան աննշմարելի է իր գոյութիւնը: Գեղն ու հրապոյր կը պակսին իրեն, երկու ճնական շնորհներ որոնցմով Նախահամութիւնը այնքան շտապօրէն օժտած է վարդը կամ արեւածաղիկը, առաջնին ընծայելով զգլխից բոյնն ու ծիրանագեղ երանգը, և միւսին ալ՝ արփաւէտ բոյսրչի մը:

Ո՛չ իսկ բաժակ մ'ունի, ուր պիտի կաթէր այգուն ցօղը, և ուրկէ պիտի դովանար երբ արեւուն ջերմութիւն: Իր միջօրէի առատութեան մէջ անյագ պապակով մը լկէր զինքը:

Լքուած ծաղիկն է ան, մերժուած բուրաստանի գեղալարդար ածուներէն. ուստի երբեք պիտի չիչէ որ լամբարի մը վրայ ագուցուելու կամ ինքնանոցի մը սերձ փունջին մէջ զետեղուելու պատիւը շնորհուած է իրեն:

Ու կարծես գիտակից իր տխուր ճակատագրին, կը նախասիրէ դամբարաններու մօտ բուսնիլ, ու զանոնք մշտադալար պահելու համար կը ծաղկի, կը փարի ցուտ շիրիմներու պատուանդանին ինքնաբեր գգուանքի մը մէջ պարուրելով զանոնք, իր կենդանական ջերմութիւնը ներարկելով անշունչ մարմարին. ճիշդ այն մայրապետին պէս որուն հանդէպ բնութիւնը ժլատ գտնուած է կանացի հրապոյրը պարգեւելու, ուստի, ցաւազին համակերպութեամբ, կ'ուստէ հիւանդանոցի մը միթասուեր յարկերուն ներքեւ մեկուսանալ, և օրհասականի մահիճներու սնալին քով կը խամրի տակաւ, զրկուելով աշխարհիկ վայելքներէ: Անանուխին ակնահաճոյ ծաղիկ մը կը պակսի, միակ բացը որով ահագին զրկանքներ կ'ընդգրկէ, մայրապետին ալ գրաւիչ դէմք մը. թէ իր սիրտը

աննիւթական շնորհի, ստացական ձիրքերու չքնաղ դանձ մըն է, կամ աղնիւ հողի մը պահուած կը մնայ այդ տխեղձ պատեանին ներքեւ, ո՞վ պիտի յօժարէր ուշադրութիւն ընծայել:

Երբ քմահաճօրէն կը փրցնես անանուխի փնջիկ մը, իր բոյրը կը կրկնապատկէ, կը զեղու, կը զգաս որ սիրուելու անհուն կարօտ մը յագեցում կը փնտռէ. անշուք գիւղի այն չքաւոր աղջիկներուն պէս որոնք խոր ու անվախճան ձանձրոյթի մը մէջ կը սպասեն, և երբ քաղքենի երիտասարդ մը իր հագուած դէպ պտոյսը կ'ընէ, հաճելի երեւալու բռնազբօսիկ զարդարանքով կը պճնուին,— գեղջուկի միամիտ սեթեւեթ մը որ արհամարհանք կը շարժէ միայն, ինչպէս անփութօրէն քաղուած անանուխի ոստիկ մը վայրկեան մը վերջը նետուելու սահմանուած է:

Ա. Բ.

ԽՄԱԳՐԱՆԱՆ ՆՕԹԵՐ

Խառն ժուովի վերջին նիստին մէջ, եկեղեցական ու աշխարհական անդամներն համաձայն դասնուեցան որ Տիգրան էֆ. Եղուսէֆեան կեդր. Վարչութեան կողմէ քննիչ—պատուիրակ կարգուի Երուսաղեմի: Պատրիարքարանի գիւանապետներէն մէկը պիտի ընկերանայ Եղուսէֆեան էֆ.ի:

Ս. Էջմիածնի Սինօղը այլ և այլ տեղերու եկեղեցեաց համար 13 քահանայացուներ ընտրած ըլլալով, որոշեց է տեղական նահանգապետներու դիմել և այդ ընծայացուները հոգեւոր կոչման մէջ ընդունելու համար արտօնութիւն խնդրել: Այս տեղեկութիւնը, որ հրատարակուած է Մայր Աթոռի թերթին մէջ պաշտօնապէս, կը հասկցնէ թէ Սինօղը սկսած է դործադրութեան դնել քանի մը ամիս առաջ ներքին դործոց նախարարութեան հասած այն հրահանգը, որով կղերակահնութեան յարմար դատուած անձերու համար նախապէս դիմում պիտի ըլլար և արտօնութիւն առնուէր տեղական իշխանութենէն: Ս. Էջմիածնայ կրօնաթերթին խմբագրապետ

տութիւնը, Հայրապետական կարգադրութեամբ, յանձնուեր է Տ. Եղիշէ Վարդ. Մուրատեանի որուն կարողութիւնն ու ձեռնհասութիւնը յայտնի են:—Ռուսիոյ ներքին գործոց նախարարութիւնը գիր մը ուղղեր է Սինօքին, որով կը հրամայէ որ այն մանուկները որոնք ամուսնութենէ առաջ կամ ապօրէն կենակցութիւններէ, կամ ամուսնալուծութիւններէ և կամ ամուսնութիւնն անվաւեր համարուելէ՝ ետքը ծնած են, իրենց մօրը անունով պէտք է արձանագրուին, և երբ մանուկներուն հայրերն անյայտ են, պէտք է արձանագրել նոյնպէս «ծնողքներն անյայտ են» առանց «ապօրինի» բառը գործածելու: Սինօքը, նախարարութեան սոյն հրամանը հաղորդեր է բոլոր Կօնստանդուպոլսի գործադրութիւն:

Ազգ. Հիւանդանոցի շէնքին ճակատը զետեղելի արձանագրութեան յիշատակարանին որոշումը Խառն Ժողովին ձեռնհասութեան վերապահուած ըլլալով, Ժողովը ուշադրութեան առաւ պատրաստուած յիշատակարանը և այս կարգի արձանագրութեանց յատուկ ոճին ու ձևին վերածելով զայն, որոշեց զետեղումը: Յիշատակարանին օրինակը հաղորդուեցաւ թէ՛ Հիւանդանոցի Հոգաբարձութեան և թէ՛ Միքայէլ էֆ. Յակոբեանի, քանդակման մասին հարկ եղածն ի գործ դնելու համար:

Պ. Ենայի Փիքօյեան, որ Կովկասի մէջ եւ անկէ դուրս մեծ անուն ունի իբրեւ առեւտրական տան մը պեան, ապրիլ 22ին մեռեր է Թիֆլիզի մէջ, 60 տարեկան: Հանգուցեալը գեղարուեստի մեծ սէր ունէր և մասնաւորապէս թատրոնի համար նիւթական մեծամեծ զոհողութիւններ կ'ընէր: Ինքն էր որ ատենօք մեծ թատրոն մը շինելով, Կ. Պոլսէն ծանօթ դերասաններ ու դերասանուհիներ, ինչպէս Մ'նակեան, Ա. Ղաւմեան, Գաւազալ, Սիրանոյշ և ըն. հրաւիրելով թատերական կատարեալ խումբ մը կազմած էր: Իր մահուանէն քանի մը օր առաջ Պ. Փիքօյեան տկար վիճակի մէջ թատրոն երթալով աշխատեւ, մեծ և թոքատապի երթակուելով կնքեր է իր կեանքը: Թատերական

մարմինը ամբողջութեամբ ներկայ գտնուելով յուղարկաւորութեան, արծաթեայ պսակ մը զրեր է դադարին վրայ:

Սեբասիոյ առաջն. փոխանորդ Տ. Սահակ Վ. Օտապաշեան՝ որ իր հիւանդութիւնը դարմանելու համար մայրաքաղաքս կը գրտնուէր, մեկնեցաւ իր պաշտօնատեղին:

Յուլի. ԿՅ. Ալան, պաշտօնեայ Հանրային Պարտքի Վարչութեան, որ բաւական կարեւոր աշխատակցութիւն մը նուիրած է մեր թերթերուն՝ շահեկան յօդուածներով, ամիսներէ ի վեր հիւանդ է եւ Շիլլիի ֆրանսացի մայրապետներուն հիւանդանոցը կը գտնուի: Յաւով կիմանանք թէ Ալան էֆ. ի վիճակը ծանր է եւ ուղեղի հիւանդութիւնը՝ որով վերջերս կը տառապի՝ երկիւղալի կերպով սաստկացած է: Լեղուագէտ եւ աշխոյժ երիտասարդ մըն էր եւ կը հետաքրքրուէր գրական ու բանասիրական հարցերով որոնց վրայ կը գրէր:

Օրթագիւղի ազգ. Վարժարանին ի նպաստ կազմակերպուած Նուագահանդէսը տեղի պիտի ունենայ մայիս 16ի կիրակին, թէփէ-Պաշլի թաղապետական թատրոնին մէջ: Ինչպէս արդէն ծանուցինք, կարգ մը հայ արուեստաշէտներ ալ պիտի մասնակցին, ինչպէս ծանօթ ջութակահար Սինանեան եղբայրները, Օր. Ծաղիկեան, Արմենակ էֆ. Յնտզեան: Երաժշտական անակնկալներ ալ վերապահուած են հանդիսականներուն: Թիկնաթոռներուն կէս ոսկի եւ աթոռներուն քառորդ ոսկի գին որոշուեր է, որպէսզի միկ տոմսակով մէկ հոգի միայն ընդունուի:

Մուրի Պատր. Փոխանորդ Տ. Գնէլ Վրդ. ի հիւանդ ըլլալուն տեղեկանալով Խառն Ժողովը, իր վերջին նիստին մէջ հարկ դատեց արտօնել զինքը որ եթէ բժշկական դարմանման միջոցները կը պակսին հոն՝ առժամեայ արձակուրդով Պոլիս գայ, պահելով վիճակին Պատր. Փոխանորդութեան պաշտօնը:

Արսոնսկի Կ. Ս. Իիթիւձեւն

Տպագրութիւն ԱՐԵՆԻՆԿ Օրագրի

ՄԵԾ ԼԻՔԻՏԱՍԻՐՆ

ՀՍՍՐԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐՈՒ

ՍՏԻՊԱՆԱԿԱՆ ՀԱՇՈՒՆՅԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

Ապրիլ 19/6 երկուշաբթի օրէն սկսած է հաշուեյարդարութիւնը եւ վաճառումն ալ մի լուծեալ է ֆիթիմօրույօ եւ Լեկերութեան տան ապրանքներուն, Լեկերութեան վաճառումնը կը գտնուի Սթամպոյ, Սուլթան Համաթ, Բագթիվան, Խան, Ապրանքներէն մաս մը կը գտնուի նաեւ Ֆրէտգէի փողոցը գտնուող մթերանոցը, վաճառքներն են մետաքսեղէն, թաւիչ, բիւլ, բրդեղէն, բամբակեղէն, որք կանխիկ գնուած են անգլիական եւ ֆրանսական գործարաններէ արդի գիններուն բարձրացումէն առաջ եւ անյախի գիններով, զորս անկարելի է այսօր ձեռք բերել եւ պիտի ծախուին ալ մի հրապարակի վրայ անմրցելի պայմաններով, Հասարակութիւնն եւ վաճառականք կը հրաւիրուին տեսնել այս վաճառքներն եւ գտնուել ներկայ անակնկալ տոկիթէն:

ՏՕՔԹ Է. ԶՈՒՔԼՕՍ

Մասնագէտ փորի հիւանդութեանց (ստամոքսի, աղեաց) ինչպէս նաեւ արտոդիտեան օխտերու:

Տօքթ. Է. Զուլլուս օր 17 տարի է ի վեր ի գործ կը դնէ իր արուեստը, վերջերս այցելած է Եւրոպայի գլխաւոր հիւանդանոցները ուր մօտէն հետեւած է իր մասնագիտութիւնը կազմող հիւանդութեանց դարմանումի նորագոյն մէթոտներուն, Կը դարմանէ թէ՛ չափահասներու եւ թէ՛ աղօց ստամոքսի եւ աղեաց հիւանդութիւնները: Բիմիական տարրալուծում (որալական եւ քանակական) եւ մանրադէտական քննութիւն ստամոքսային հիւթերու: Կը բուժէ ելեկտրականութեամբ եւ մասսաժով: Կը դարմանէ ջերմամիզութիւնը իրեն յատուկ դարմանք եւ դեղերով: Հիւանդներ կ'ընդունի ալէն օր ժամ 9էն 12 եւ 2էն 5(Ը. Ե.), իր անկարանին մէջ՝ Բերա, Տէրվի փողոց Թէփէ—Պաշրի պարտէզին դէմ, Կրնորուն համար սպասման առանձին սրահ, Ստամոքսի եւ աղեաց հիւանդութիւններէ առնապաղ աղքատները կ'ընդունի չորեքշաբթի օրերը ժամ 9էն մինչեւ կէս օր:

ԱԴԱՄ ՎԱՐԻԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամէն Տեսակ բօնաֆիյէ ապրանքաց

Մեծ—Շուկայ, Քիւրքիսկերու դրան կից, Թ. 41—43

Նոյնպէս, արանց եւ կանանց ճաշաւոր հովանոցներու վաճառատուն, Պօլիս, Սուլթան—Համաթ, Միտիլի Դրամատան դէմ թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները, թէ՛ թօհաֆիյէի վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանանց յատուկ հովանոցներ, իրենց գեղեցկութեան կը միացնեն տեղաւորութիւն, եւ դիւրամատ չելի գիներու առաւելութիւնն ալ կ'ընծայեն հասարակութեան:

Աղա՛մ վարդեան մեծապէս գոհ թողուցած է իր բազմաթիւ յաճախորդները: Կ'ալ ժէ որ Շուկայ ելլող ալէն ընտանիք այցելէ ահագամ մը այս երկու վաճառատունները՝ եղանակին պէտքերը հոգալու համար:

ԱՐՄԵՆԱԿ ԻՆՃԷԵԱՆ

ՓԱՍՏԱՐԱՆ

Վկայեալ Բարիզի Իրաւագիտական վարժարանէն: Հաստատուած է Ղալաթիա, Մէհմէտ Ալի փաշախան, թիւ 35:

Կըստանձնէ պաշտպանութիւնը ալէն տեսակ դատերու, օսմանեան եւ օտար ալէն կարգի դատարաններու առջեւ:

ԶԱՐԵՀ ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

ՎԻՐԱՐՈՅԺ—ԱՏԱՄԱՐՈՅԺ

ՎԿԱՅԵԱՆ

ԴՐՈՒՆ ԱՏԱՄԱՐՈՒԺԱԿԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԷՆ

Մեծ—Շուկայ, Քիւրքիսկերու դրան կից, Թ. 41—43

ՊԱՇՏՈՒՆ ԺԵՆԵՎԻ ԲՈՅԿԱԿԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԷՆ

Կը բուժէ աղաւթի ալէն տեսակ ցաւեր եւ լինտերու հիւանդութիւններ, կատարելազարծեալ սիսթէմներով, Հիւանդ կ'ընդունի ալէն օր, Բերա: Մեծ Փողոց ԲրէՏԻ ԼիՍՆԵՒԻ դիմացը Կլավանի փողոց թիւ 2:

Երեքշաբթի եւ Ուրբաթ օրերը մինչեւ ցորեկ աղքատաց անկողնի քաշելը ձրի է:



ՌՕՍԻԱ - ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՂ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20ի կայս . Ուքազով արտոնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը :

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿեԱՆՔի վրայ, եւ ՀՐԴԵՂի, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԴՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾ- ՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈԳԵՆԱԻՈՎ ՈՒՂԵՒՈ- ՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿՈՌ- րուելուն դէմ :

Ընկերութեան դրամազուխը, ամբողջապէս վճարուած 10,666,667 Ֆրանք

Նրաշխաւորութեան գումար աւելի քան 137,300,000 »

Ընկերութեան ապահովագրութիւններուն վճարուած դրամա- զուխ եւ վնասուց հատուցում 282,000,000 »

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տուրս 54,000,000 »

Ամէն տեսակ տեղեկութեանց Էամար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվոտա, Ղալաթիա :

ՑԱՄԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

Ունի կեանքի, օժիտի, արկածի, ցմահ բուժակի նիւղեր

VICTORIA ՎԻԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ կեանքի ապահովագրութիւններ ունի թէ՛ բժշկական քննութեամբ եւ թէ՛ առանց բժշկական քննութեան
DE Առանց բժշկական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւններ
BERLIN բուն վճարումները չաթաթակաւ մասնավճարներով տեղի կունենան, սկսեալ 5 դրուչէն

Ապահովագրեալ գումար 1902ին Ֆր. 1,244,457,577

Պահեստի դրամ 1902ին » 451,284,214

Հաստատուած 1853 սեպտ. 20ին ար- Բայակսն հրովարտակալ եւ ուղղակի կառավարութեան հսկողութեան ներ- քէն :

ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օսմ. կայս Պանքա

եւ Քրէտի իրոնէ

Լիազօր Ընդհ. Ներկայացուցիչ ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԳԱԼՖԱՑԵԱՆ

Տեսուչ

ՑԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՔԷՉԵՃԵԱՆ

Պոլիս Գաքրերոզոլու խան

քիւ 45 եւ 45 Կ :

ՏՕՔԹ. Ժ. ԿԱԼԵՊ

Մասնագէտ միզանցքային հիւանդու-
թեանց: Վկայեալ Վիէննայի բժշկական Հա-
մալսարանէն եւ Բարիզի ու Պէրլիէի հիւան-
դանոցներուն մէջ գործնական փորձեր կա-
տարած, Կը դարձանէ իրեն դիմող հիւանդ-
ները՝ զիտական նորագոյն մէթոտներու հա-
մաձայն: Հասցէ՝ Բերա, Թիւնէլի Բասաժին
դէմ, Եէմէնիճի փողոց, Թ. 31:

7-12

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲՆՐԱ ՄԵՇ ՓՈՂՈՅ ԹԻՒ 200


Կալաճա-Սէրայի Լիսէին դ'մ

ԳԵ. ՆԵ. ՇԷ. օրերը առաւօտեան կանու-

խէն մինչեւ իրիկուան ժ. 11½

ԲԵ. ԳԵ. Ուր. օրերը ճէն մինչեւ 11½

Երաւկի օրերը յամադրութեամբ



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի
մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքե-
նայ մը սնենալ, որովհետեւ լաւ մեքենայ
մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մա-
տուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը ան-
վերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:
Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՐԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ջեռֆի, ռաֆի ու ռաֆի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն ա-
ւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւ-
րագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝
ամէն ոք Սինկէրի մեքենաները կը դնէ:

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճա-
ռատանց մէջ:

ՍԻՆԿԷՐԻ
ՀԱՅԹԱՅԹԻՉ
ՊԱՐԱՏԱՆ

ԲՆՐԱ.

1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿՍ.Լ.Ա.Թ.Ա.

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԿԻՒՏՍՐ

Չարչը Պոյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կասաբեալ երաշխաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր ֆաղաֆերուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց,
Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅԱՆՈՒՄ . ԹԱԳ . ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ . ԸՆԿ .

Հրդեհի եւ կեանքի (ի վիճակ)

ՊԱՏՈՒՄԱՆԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՐԹՈՒՆԻՍԷ ՊԱՎԻԹ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր . Ընկ . քնդդեմ հրդեհի եւ ծովային աղանդներու (ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուին լաւագոյն պայմաններով :

Սոյն ընկերութեանց Դրամատունն է ի Կ. Պոլիս, Բոքսի Լիօնի
Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. Յ. Մ. Ս. Ս. Ս.

Գրասենեակ, Պոլիս, Հանօթուլօ խան, Թ. 52-53-54-55-56

ՕԹԷԼ ՏԵՕՌՕԲ

(ՊՈՒՍԱ.—ՉԷՔԻՐԿԷ)

Այս վաղածանօթ հաստատութիւնը որ
Պրուսայի բարձրագոյն ու գեղադուարճ մէկ
կողին վրայ կը գտնուի, ջերմութիւններուն
մօտ, իր բոլոր յաճախօրէնները գոհ ձգելու
պայմաններով օժտուած է : Նոյնպէս եւս
րուն ու կան կարասիներուն մաքրութիւնը,
որոնք ընտանեկան յարկի մը հանգամանք
կուտան անոր, սպասարկութեան կանօնա-
ւորութիւնը եւ առատ ու ընտիր ճաշերը
գերազանցապէս յանձնարարելի գործուցած
են «Կրանա Օթէլ ա' Էօթօր» պանդոկը որ,
ներկայ եղանակին մէջ մասնաւորապէս
հանգստաւէտութիւն կընծայէ Զերմակները
գաղղղներուն, դիւրամատչելի պայմաններով :

ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Գնեցէք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱ-
ԳՈՒԼԵԱՆԻ՝ Զինատանէն, Հնդկաստանէն,
Ճալալէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած
քաւմ, հոսաւեք եւ առողջաբար թէյերէն,
որոնք ամրան եղանակին յարմարագոյն ըմ-
պելին են :

Միշտ ուշադրութիւն մեր
վաճառանիչին :

Կ. Պոլիս, Պահէ Գափու,
ձէլալ պէյ խան, Թիւ 10 :

Մասնաճիւղեր Թուրքիոյ
գլխաւոր քաղաքներուն մէջ,
նոյնպէս նգիպատ :



ՏՕԲԹ. ԱՆԹՕՆԻԱՏԻՍ

(Dr. Antoniadis)

Մասնագէտ ծածուկ եւ մօրթային ախտերու
Բերա, Սեղիս փողոց, Թ. 20
(Անգլիական դեսպանատան մօտ)

Վկայեալ Վիէնայի Համալսարանէն ուր ու-
սած է տասնմէկ տարի, միեւնոյն ատեն
իբր օգնական—բժիշկ ծառայած ըլլալով
Բրոֆ. Նաւմանի, Քարօսիի եւ Տիֆֆէլի
գաղտնի հիւանդութեանց յատուկ քլինիկ-
ներու մէջ :

Մինակ ծածուկ հիւանդութիւններէ եւ
մօրթային ախտերէ տառապողները կ'ընդունի
դաւա կը բժշկէ նորագոյն եւ կատարելա-
գործեալ մէթօտներու համաձայն : Իր մաս-
նագիտութենէն դուրս որեւէ հիւանդ չըն-
դունիր :

ՏՕԲԹ. ԲՕՐԹՈՒԳԱԼԻՍ

(Dr. Portucalis)

Նախկին բուսուցիչ Կ. Պոլսոյ Կայս. Բժշ-
կական վարժարանին, անդամ Բարիզի Բժշ-
կական համաժողովին :—Մասնագէտ՝ արանց
եւ կանանց ծննդական գործարաններու հի-
ւանդութեանց :—Պատույ վկայագիր ունի
Պէրիէի, Լիստոնի, Բեշթայի եւ ուրիշ եր-
կիրներու Ակադեմիաներէն :—Հնարիչ բժշկա-
կան գործիքներու եւ հեղինակ իր ամսնա-
գրատութեան վերաբերեալ գործերու :

Հիւանդ կ'ընդունի Պոլսոյ կողմը, կա-
մօրջին դէմի անկիւնը, իր դարմանատան
մէջ, ամէն օր կէսօրէն մինչեւ իրիկուն : Իսկ
Բերա, Թաքսիմ, Քրանսական հիւանդանոցին
դէմ, ամէն օր առաւօտէն մինչեւ կէս օր եւ
իրիկուն ժամ 6 էն 9 (Բ. Ե.)